

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Դ-ր Ս. ՏԵՐ-ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

(Ըստ ՀԱԿՈՐ ՇԱՄԱԽԵՑՈՒ)

9(47.925)

S-37

ԱՐՄՏԱՆԻ ՀՐԱՅԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՐԵՎԱՆ 1 9 4 0

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ  
ИНСТИТУТ ИСТОРИИ И АРХЕОЛОГИИ

Д-р С. ТЕР-АВЕТИСЯН

# ПОХОДЫ НАДИР ШАХА

(В описании АКОПА ШАМАХЕЦИ)

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а  
ЕРЕВАН 1 9 4 0

5 OCT 2011

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)

S-37

Դ-ր Ս. ՏԵՐ-ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ԱՐՁԱՎԱՆՔՆԵՐԸ

(Ըստ ՀԱԿՈԲ ՇԱՄԱԽԵՑՈՒ)

ԱՐՄՖԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1 9 4 0

14 SEP 2013

18098

Տպագրվում է ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի  
Հայկական Ֆիլիալի Նախագահության վորոշմամբ:



1270  
40

## ՀԱԿՈՒ ՇԱՄԱԽԵՑԻՆ ՅԵՎ ԻՐ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Տասնութերորդ դարի առաջին քառորդում Անդրե-  
կովկասը, մասնավորապես նրա հարավ-արևելյան ծայրա-  
մասերը շատ սերտ տնտեսական կապերով կապված  
էին Իրանի հետ: Սրանով պետք է բացատրել այն  
յերևույթը, վոր Իրանում շատ հաճախ տեղի ունեցող  
քաղաքական փոփոխությունների ժամանակ, կենտրո-  
նական իշխանության բացակայության պատճառով,—  
յերբ Տաճկաստանը հարմար առիթից ոգտվելով նվա-  
ճում էր Անդրկովկասը և աշխատում նրա կապը կտու-  
րել Իրանից ու դնել ավելի ծանր հարկերի տակ, այս  
պայմաններում տաճկական իշխանության դեմ սկըս-  
վում էր մի հանդուգն դիմադրություն, նույնիսկ մաս-  
նակի ապստամբություններ, թեև պետք է ասել, վոր  
այդ ժամանակները Տաճկաստանի Իրանի համեմա-  
տությամբ ավելի կազմակերպված պետություն էր:  
Պատճառն այն էր, վոր մեր յերկիրը, հանձինս իր  
ֆեոդալական տարրերի—հողատերերի, մելիքների ու  
բարձր հոգևորականների, Իրանի միապետների ձեռքին  
դենք է յեղել իրենց լուծը կրկին դնելու Անդրկովկասի  
ժողովուրդների ուսին: Մեր յերկրի պատմությամբ  
զբաղվող մասնագետները պետք է նկատի ունենան այս  
յերևույթը և աշխատեն վորոնե սրա արմատները: Նույն  
պատկերը մենք տեսնում ենք Շահաբաս I-ի իշխա-  
նության առաջին տարիներից սկսած, յերբ տաճիկ-

ներն ոգտվելով նրա հօր՝ Խուզարենդե-շահի թուրու-  
թյունից՝ նվաճում են իրանական հողերի մի մասը—  
Ատրպատականը, Յերեվանը, Գանձակը։ Տաճկական  
կարգերն Անգրկովկասում համակրություն չեն գտնում։  
Դժգոհ ելին նրանցից վնչ միայն կալվածատերերը,  
այլ նույնիսկ գյուղացիները։ Ժամանակի պատմագիր  
Առաքել Դավրիժեցու ասելով՝ տաճիկները իշխանու-  
թյունից սկսում են Իրան փախչել նույնիսկ ամբողջ գյու-  
ղեր\*։ Այս յերևույթը Անգրկովկասում Շահաբասի ունե-  
ցած հաջողությունների պատճառներից մեկն է լինում։  
Տաճիկներին դուրս քշելով Անգրկովկասի իրանական  
յերկրներից, Շահաբասը ջուղայեցի հայ վաճառական-  
ների ոգնությամբ հսկայական տեղ է հասկացնում  
առևտրական կապիտալին ու տեղ դառնում առևտրական  
ճանապարհների ու շուկաների։ Ինչպես հայտնի է,  
այս ժամանակամիջոցը (1587—1628 թ. թ.) մի դարա-  
շրջան է կազմում վնչ միայն Իրանի քաղաքական ու  
տնտեսական վերելքի, այլ նաև մեր՝ հայերիս կյան-  
քում։ Զուղան իր առևտրական կապիտալով մի ցըն-  
ցում է առաջ բերում մեր իրականության մեջ, վոր իր  
հերթին անդրադառնում է մեր գրականության վրա,  
տալով մեզ պատմական-գրական հիշատակարանների  
մի ամբողջ շարք։ Նման մի պատկեր մենք տեսնում  
ենք XVIII դարում, յերբ ավդանների արշավանքի հե-  
տևանքով Իրանում առաջ յեկած անիշխանությանը  
(1722—1729) հետևում է Նադիր-շահի թագավորու-  
թյունը, վորը տաճիկներին նորից կարճ ժամանակվա

լնթացքում դուրս է քշում Կովկասից և վերականգ-  
նում իրանական թագավորությունը։ Հայաստանում և  
մասնավորապես Եջմիածնի շրջանում տաճիկների դեմ  
Նադիր-շահի վարած պատերազմները և քաղաքական  
հաշիվներով դեպի հայերն ու հատկապես դեպի իր ժա-  
մանակի հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացին ու-  
նեցած նրա ուշադիր վերաբերմունքը նույնպես անդ-  
րադարձել են հայոց պատմական-գրական աղբյուրների  
վրա և ավել պատմիչների մի ուրիշ շարք, վորոնք  
մինչև այժմ վնչ միայն ըստ արժանվույն չեն գնա-  
հատված, այլև նույնիսկ ամբողջովին չեն հրատարակ-  
ված։ Խոսքս վերաբերում է Նադիրի ժամանակակից  
հայ պատմագիրներից մինչև այսօր անձանոթ մնացած  
Հակոբ Շամախեցուն։

Շահաբաս I-ի ստեղծած թե՛ քաղաքականապես և  
թե՛ տնտեսապես ուժեղ պետությունը նրա հաջորդների  
ժամանակ բռնեց քայքայման ուղին։ Յերկրի Ֆինան-  
սական ուժը կազմող ջուղայեցի վաճառականները կա-  
ռավարության կողմից նախկին պաշտպանությունը  
չունենալով և, վոր գլխավորն է, նոր ու ավելի ձեռն-  
տու շուկաներ վորոնելու հետևից ընկնելով, հետդ-  
հետ հեռացան Իրանից։ Վաճառականության թուլա-  
նալու պատճառով պետության յեկամոտներն սկսեցին  
պակասել։ Կառավարությունն իր ծախքերը ծածկելու  
համար ուժ տվեց հարկերին, և Սեֆյան հարստության  
վերջին ներկայացուցիչ Հյուսեյին-շահը (1694—1722  
թ. թ.), Իսպահանի իր պալատում փակված, իրեն  
շրջապատում է մոլլաներով և մտածում Զուղայի հա-  
յերին ու մայրաքաղաքի հրեաներին բռնի կերպով  
մահմեդական դարձնելու մասին։ Յերկրի իշխանու-

\* Առաքել Դավրիժեցի, Պատմություն, գլ. Գ., եջ 15—  
17, Վաղարշապատ, 1884 թ.։

Թյուենն անցնում է սանձարձակ խաների ձեռքը, վորոնք յերկիրը մղում են դեպի տնտեսական անկում և փողովրդին հանում իրենց դեմ: 1709—14 թ. թ. ավղանները Միր-Վեյսի առաջնորդությամբ ապստամբում են Գորգի խանի դեմ: 1722 թ. Միր-Վեյսի ազգական Մահմուդը միացնում է ավղանական ցեղերը և, կարճատև պաշարումից հետո, վերցնում է Իսպահանն ու գահընկեց անում Հյուսեյին-շահին: Այդ որվանից Իրանում տիրապետում է սարսափը, թալանը: Յերկիւնն ընկնում է անիշխանության մեջ: Հանգամանքից ոգտվում են Իրանի հարևան պետություններից՝ Տաճկաստանը, վոր անարգել նորից մտնում է Հայաստան ու Վրաստան:

Իրանն այս ծանր վիճակից հանողը, նրան վերականգնողը և տաճիկներին իրենց նախկին սահմանները քրոջը լինում է Հյուսեյին-շահի՝ ավղանների ձեռքից փախած Թահմազ վորդու գորապետը՝ Թահմազ-Ղուլի խանը, վորն իր պատերազմական ընդունակությունների շնորհիվ կարողացավ կարճ միջոցում կազմակերպել ուժեղ զինվորական ուժ, դուրս քշել ավղաններին և տաճիկներին Իրանից, գահընկեց անել Թահմազին ու բազմել շահերի գահը: Վերոհիշյալ դեպքերից շատերին մեր պատմության հեղինակ Հակոբ Շամախեցին աղանատես է յեղել: Համառոտ կերպով հիշելով ավղանների արշավանքը, Հյուսեյին-շահի գահընկեցությունը, Շամախեցին անցնում է Թահմազ-Ղուլի խանի պատերազմների նկարագրությանը և պատմում, թե ինչպես նա ավղանների իշխան շահ Աշրաֆին 1729 թ. նոյեմբերի 4-ին քրում է Իսպահանից և Իրանի գահը հանձնում շահ Թահմազին: Այնուհետև Թահ-

մազ-Ղուլի խանն իր զենքն ուղղում է ոսմանցոց դեմ և հետ վերցնում Համազանը, Ուրմիան, Քիրմանշահը ու ապա Թավրիզը: Ավղանից Հերաթ քաղաքին տիրելուց հետո, Թահմազ-Ղուլին դահընկեց է անում շահ Թահմազին, նրան անվանելով «անբախտ, անարի և գինեմոլ» և նրա տեղ թագավորեցնում շահ Թահմազի 56 որական Շահ-Աբաս վորդուն: Այս վերջին դեպքերի ժամանակ Հակոբ Շամախեցին յեղել է Նոր-Ջուղայում, ինչպես գրում է ինքն իր «Շահողարան» ձեռագրում, վորից և քաղում ենք Նադիր-Շահի պատմությունը: (Այս ձեռագրի մասին կխոսենք հետո):

«Վայ իմոյ եղկելոյ կենաց, վասն դառնութեան աւուրս այսորիկ,—գրում է Շամախեցին,—գի ի դրօշմել խորանայս, որ էր զւրդ ժամ աւուրս, գ. շաբթի, ի տօնի ծնողաց սրբոյ աստուածածնին ըն թուոջս ուճ և միակի (1732) և օգոստոսի քսաներորդի և երկրորդի խորխտամիտ սպայապետն խորասանեցի, որ անուն իւր Թահմազ խան, ընկեց բռնութեամբ ու չար խորհրդով զշահ Թահմազ թագաւորն յաթոռոյն և թագաւորեցոյց դիւտուն և վեց օրեա ծին գորդի նորա ընդ նորա: Ոհ թէ արդեօք գինչ կրիոց իցէ տառապեալ ազգս մեր»\*:

Թահմազ խանը, ժամանակի սովորության համաձայն, իր հարեմի համար մանկաժողով է անում նաև Նոր-Ջուղայի հայերից, վորի առթիվ Հակոբ Շամախեցին, վոր այդ ժամանակ ապրում էր Նոր-Ջուղայում,

\* Յերեմանի Պետական Զեռագրատան (նախկին՝ Պետական Թանգարանի) № 585 ձեռագիր, «Շահողարան», II մաս, ԺԳ տետրակի վերջը:

իր վերոհիշյալ «Շահողարան» ձեռագրում դառնացած գրում է:

«Ո՛հ կարի դառնագոյն է ժամս, զի Թահմազ խանն ի վշտակիր ազգէ հայոց Զուգայեցեոց զզ [6] աղ- ջկունս ժ ամեայս էառ և ապա որոց ոչ հաւանեալ ևս ի տէրսն»\*:

1734 թ. Թահմազ խանը Բաղդադի մոտերը հաղ- թում է ոսմանցիներին և սպանում նրանց զորապետ Թոփալ Ոսման փաշային: Բաղդադի Ահմեդ փաշայի հետ դաշն կապելուց հետո Թահմազ խանը վերադառ- նում է Թավրիզ:

«Բայց ի Գիլան ոչ գնա, վասն զի յորժամ շահ Թահմազն գնաց Սպահան և նստաւ ի յաթոռն հայ- րենի, յայնժամ ուրախացեալ ըստեսացն կամօք իւ- րեանց ելին ի Գիլանայ, ի Բաքուայ և ի Գորբան- դայ և գնացին յաշխարհն իւրեանց»:

Զարմանալի միամտությամբ այսպես է բացատր- րում Շամախեցին ուսաների հեռանալը իրանական հողերից, վոր զրավել էր Պետրոս I-ը 1722 թվին: Հայտնի չե, վոր Պետրոս I-ից հետո, 1737 թ., Ռու- սաստանն ստիպված չեղավ ժամանակավոր կերպով Իրանում և ընդհանրապես Անդրկովկասում հրաժար- վել նվաճողական քաղաքականությունից: Մենք հետո կտեսնենք, վոր ցարական քաղաքականության մասին Հակոբ Շամախեցին, ինչպես նաև իր ժամանակի հայ և վրացի ավատական խավերը շատ սխալ կարծիք ու- նեյին:

Թահմազ խանը, Շամախին լեզգիներին ձեռքից առ- նելուց հետո, արշավում է Գանձակի վրա, վորտեղ

«Շահողարան», I մաս, 8-րդ տետրակի վերջը:

նստած էյին ոսմանցիք: Կարճ ժամանակում տաճիկ- ներին նա դուրս է քշում Սյունիքից ու Վրաստանից և պատրաստվում է Ղարսի վրա հարձակվելու: Հայաս- տանի այս մասում ոսմանցիների դեմ Նադիր-շահի ու- նեցած պատերազմների մանրամասն նկարագրությունը թողել է ժամանակակից և դեպքերին մասնակից, ակա- նատես Աբրահամ կաթողիկոս Թրակացին ևս, վորը կոչվում է նաև Կրետացի\*:

\* Աբրահամ Կրետացու անունով մինչև այժմ հայտնի չեւր նրա պատմական մեծ աշխատությունը՝ «Պատմութիւն անցիցն իւրոց և Նադիր-շահին պարսից», վորը տպվել է յերկու անգամ— Կարկաթա՝ 1796 թ. և Վաղարշապատ՝ 1870 թ.: Բացի սրանից, Պետական Կենտրոնական Զեռագրատանը պահվում է Կրետացու ծոցի տետրակ-հիշատակարանը, ուր ապագա պատմիչը մանրա- մասն գրի չե առել իր հետաքրքիր ճանապարհորդությունը Թե- քիւր-դաղից դեպի Նջմիածին՝ Կարնո և Ղարսի վրայով, մեծ բերե- լով ճանապարհի համար գնած ապրանքների ցուցակներն՝ իրենց գներով և ճանապարհին յեղած ծախքերը՝ զարմանալի մանրա- մասնությամբ: Այս տետրակում ամենահետաքրքրականը Կրետա- ցու տեսակցությունների նկարագրություններն են Թահմազ-Ղուլի մեծ խանի (Նադիր-շահի) հետ Կրետացին մի առ մի մեջ է բե- ռում իր այն ընծաները, վոր նա տվել է մեծ խանին և նրա պաշ- տոնյաներին. այս բոլորը նա անհարմար է համարել մոցնել իր պատմագրության մեջ: Կրետացին պարզ, կիսախոսակցական կեն- դանի լեզվով պատմում է Թահմազ խանի՝ Նջմիածին դալն իր հարեմով և նրան ցույց տրված ընդունելությունը: Այս հիշատա- կարանի հետաքրքրական մասերից է նաև Կրետացու՝ Նջմիածնից դեպի Մուղան կատարած ճանապարհորդության ժամանակ Նախի- ջեվանի և Զանգեզուրի հայ գյուղերում թե՛ դրամով և թե՛ իրերով ստացած նվերները, վորոնցով կարելի չե գաղափար կազմել այդ գյուղերի անտեսական դրության մասին:

Այս հետաքրքիր հիշատակարանը ուսանենք թարգմանության հետ միասին պատրաստել եմ տպագրության համար Վերջերս Պետ. Կենտ. Զեռագրատանը իմ պարապմունքների ժամանակ

Կրետացիին ավելի մանրամասն ու հետաքրքրական ձևով և պատմում Նադիր-շահի պատերազմներն Եջմիածնի և Յերեվանի շրջանում, քան Շամախեցիին: Սրա պատճառը բացատրում և ինքը՝ մեր հեղինակը, մեր հրատարակած նրա այս աշխատության մեջ. «Եթէ որպէս աստ ոչ գրեմ մանրամասնաբար, քանզի ի յայլ պատմութիւնս գրեալ եմ զայնս», — գրում և նա: Ուրեմն պետք և յենթադրել, վոր Շամախեցիին գրել և նաև մի ուրիշ, ավելի ընդարձակ ու մանրամասն պատմական

նկատեցի Նադիր-շահի վերաբերյալ ուրիշ պատմական մի գործ. զա Նադիր-շահի հայատառ պատմութիւնն և տաճկերեն, ուր նկարագրված և Նադիրի արշավանքները դեպի Ավղանիստան և Հնդկաստան ու նրա մահը: Այսպիսով, Աբրահամ Կրետացին, Հակոբ Շամախեցին և տաճկերեն գրող այս նոր հեղինակը, վոր իր ասելով ուսմանովի հպատակ հայերից և, «Թամպուրի քիչիկ Յարութիւն» անունով, միասին ամբողջացնում են Նադիր-շահի պատմութիւնը: Իմ հետագա վորոնումների ժամանակ պարզվեց, վոր այս հայատառ տաճկերեն պատմության հեղինակ Թամպուրի Հարութիւնը Նադիր-շահի մոտ գնացող տաճկական դեսպանության կազմի մեջ լինելով՝ ակնատես և յեղել իր նկարագրած դեպքերին Թամպուրի Հարութիւնի այս պատմութիւնը 1800 թվին հրատարակել և Վենետիկում, հետևյալ վերնագրով. «Գա հ մ ա ն Գ ու լ ու խ ա ն ը ն Թ է վ ա Ր Ի ք Ի»: Նաղըմըշ Ըստամպուլու Թամպուրի Արութիւնդէն օսմանը ելլիս իլէ եօլնուլուդա աճէմիստան թարգմարնա: Սրա ֆրանսերեն թարգմանութիւնը լույս և տեսել «Bulletin de l'Institut Egyptien, tome III, année 1914, № 168—232. Le Caire. Թարգմանութիւնը կատարել և Հակոբ Աբթին փաշան, վորն իր աշխատությանը կցել և մի ներածութիւն՝ հետևալ վերնագրով. «Journal de Tambouri Arouine sur le conquête de l'Inde par Nadir Schah (Tahmas Kouly Schah) 1735—1740.

Թամպուրի Հարութիւնի Պատմության Վենետիկի հրատարակութիւնը և Աբթին փաշայի կատարած ֆրանսերեն թարգմանութիւնը սիրով արամազրեց ինձ պրոֆ. Լ. Մելիքեթ-Բեգյանը, վորին հայտնում եմ իմ ընկերական շնորհակալութիւնը:

աշխատութիւն, վոր դեռ մեզ անծանոթ և մնում: Այդ նույն մեզ անծանոթ պատմական աշխատության մասին նա հիշում և մի քանի անգամ մեր այս հրատարակած Թահմազ-Ղուլու պատերազմների նկարագրութիւն մեջ: Խոսելով Եջմիածնի տաճարի մասին, Շամախեցին ավելացնում և. «զորմէ այժմ ոչ ըստ արժանւոյն կարեմ վիպարանիլ, վասն իրութոյս և առաւել զի ի յայլումն պատմութեան բացայայտեալ եմ զայն մանէ զցանկալուոյն հոգհոյս»: Կամ թե չե՝ խոսելով Նախիջևանա յերկրից Խորասան քառ 300 տան մասին, Շամախեցին ավելացնում և. «Ե թ է որպէս տարան զնոսա ի յայլ պատմութեանս լիապէս գրեալ եմք»: Շամախեցու անունով մեզ և հասել նաև մի շատ հետաքրքրական գրվածք: Դա նրա «Գավազանագիրք»-ն և, վորի ամենալավ ուրինակը պահվում և Յերեվանի Պետական Ձեռագրատանը: Այս ձեռագիրը պատկանելիս և յեղել Հակոբ Շամախեցուն, վորը մի քանի տեղ դրել և իր անձնական կնիքը\*:

Նադիր-շահը տեսնելով, վոր ոսմանցիների հետ գործ պիտի ունենա, Յերեվանի, Ղարսի շրջանում և հարևան յերկրներում, վորտեղ այդ ժամանակ հայերը կազմում էին ազգաբնակչության հիմնական մասը, դրա համար ել ամեն կերպ աշխատել և սիրաշահել նրանց՝ հանձինս Եջմիածնի հոգևորականութիւն ու հայ մելիքների, վորովհետև նա լավ գիտեր, վոր հայերի համակրութիւնից շատ բան և կախված: Յեւ իսկապես, հայերն ամեն կերպ ոգնում են Նադիր-շահին: Նադիր-շահն զգում և

\* Տես «Գավազանագիրք», № 676: Այս «Գավազանագիրքի» մեկ ուրիշ ուրինակն և Յերեվանի Պետական Գինտր. Մատենադարանի № 1498 ձեռագիրը:

գնահատում ե հայերի ծառայութիւնը. այդ յերևում ե Աբրահամ Կրետացուն ե հայ մելիքներին հրաժեշտ տալիս հայերի հասցեյին նրա ասած գնահատականից: Նա հանձնարարում ե նրանց Յերեվանի նոր խանին. այդ առթիւ Կրետացին իր Պատմութեան մեջ գրում ե.

«Այլ ե ազգիս մերոյ գոհ ե շնորհակալութիւն երեր՝ թէ ինձ լաւ ծառայութիւն արարին, մտերմաբար ե միամիտ սպասաւորեցին յամենայն զօրութենէ, ե յամենայն յանձնէ, ամենայն դիմօք ե չըլինի թէ նեղացնէք զազգս Հայոց կամ քնասէք, զի զայնպիսին պատուհասակո՞ծ առնեմ», — ասում ե Նադիր-շահը\*: Բայց այդ նրան չեւ արգելում հարյուրավոր հայ ընտանիքներ թե Յերեվանի շրջանից ե թե Թբիլիսիից բռնի կերպով Խորասան ուղարկելու խիստ հրամանը տալուն, ե կամ թե նույն այդ ճշմարտինը, վոր վերցրել եր իր հովանու տակ, Ղազար Ճահկեցի կաթողիկոսի ժամանակ ծանր տուգանքներով խեղդելուն: Շամախեցին իր պատմական աշխարհը փակում ե Թահմազ-Ղուլու ընտրութեամբ Մուղանում, ուր հայերի կողմից ներկա յեն լինում Աբրահամ Կրետացի պատմաբան կաթողիկոսը, Յերեվանի, Ղարաբաղի, Շամախու ե Թբիլիսիի հայ մելիքները: Շամախեցին լավ ձանաչելով Նադիր-շահի բռնակալ բնավորութիւնը՝ պախարակում ե այդ ընտրական ժողովի վորոշումը, վոր այդ գայլին իրենց «ոչ-խարացեալները» վրա հովիւ են կարգում: Այս խոսքերով Շամախեցին վերջացնում ե Նադիր-շահի մասին

\* Աբրահամ Կրետացի — Պատմագրութիւն, եջ 24, Վաղարշապատ, 1870 թ.:

գրած իր համառոտ պատմական տեսութիւնը, վորը հրատարակութեան ե տրվում առաջին անգամ\*:

Այժմ մի քանի խոսք Հակոբ Շամախեցու անձնավորութեան ե նրա գրական գործերի մասին:

Մեր հեղինակի կյանքի ե գործունեութեան մասին ամենաընդարձակ տեղեկութիւնները գտնում ենք նրա սեփական ձեռագրի—«Գալապանագրքի» վերջում, վորի ձեռագիրը որինակները գտնվում են Յերեվանի Պետական Զեռագրատուն-Մատենադարանում (№ № 676 ե 1492): Առաջին ձեռագիրը բերված ե Ներսիսյան դպրոցից, ուստի Ստ. Կանայանը 1893 թ. այդ դպրոցի ձեռագրերի ցուցակը կազմելիս (եջ 48—52) ճիշտ կերպով գնահատել ե այդ «Գալապանագրք» կոչված պատմական ժամանակագրութեան արժեքը ե հրավիրել մասնադետաների ուշագրութիւնը\*\*:

\* Ռուսերին թարգմանութիւնը լույս ե տեսել Թբիլիսի, 1932 թ., հեռեկալ վերնագրով. С. Тер-Аветисян — Походы Тамас-Кули хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акопа Шамакени.

\*\* Այս գրչագիրն ունի հեռեկալ վերնագիրը. «Գիրք պատմութեանց, որ կոչի Գալապանագիրք համահաւքեցեալի հին դաւազանագրաց ե ի վրաբանութեանց ի մի բաղմօք երկամբ յումենէ Ալեքիսէ աշխատասիրէ եղբկացւոյ ի հայրապետութեան ամենայն Հայոց ե որոյ եջմիածնի լուսանկար աթոռոյ տեառն Աստածատրոյ: Յամի Տեառն 1714 ե ի հայոց Ռճի ե Գթուին»:

Զեռագրի ստացողն ե Հակոբ վարդապետ Շամախեցին, վորը 4ր յերեսի վրա գրել ե իր նոտրգիր հիշատակարանը ե դրել իր անձնական կնիքը—«Գրիստոսի ծառայ Յակոբ վարդապետ թ. ՌՃ29»:

Զեռագրի 208ա յերեսի վրա Հակոբ Շամախեցին մանրամասն

Շամախեցիին 1743 թ. ստանալով Ավետիք Տիգրանակերտցու 1712—1714 թվականներին գրած ժամանակագրությունը, «երկամբ բազմօք» շարունակում ե այն և հասցնում մինչև իր ժամանակները՝ նախորդ վորոշ փոփոխություններ մտցնելով «Գավազանագրքի»

պատմում ե, թե ինչ ձևով և ինչ նպատակի համար և կազմված այդ պատմական ժամանակագրությունը, վորի վրա ինքը մեծ աշխատանք և թափել՝ յոթ աղյուսակների մեջ դնելով աշխարհիս ստեղծագործության, Քրիստոսի ծննդյան և հայոց թվականները, ապա դրանց տակը նշանակել հայոց հայրապետներին, ումանցոց և պարսից թագավորների հաջորդականությունը, իսկ վերջին՝ յոթերորդ աղյուսակում գրել մահմեդականների (հեջրի) թվականը: Կարևոր ենք համարում Շամախեցու այդ «Առ ուսումնասել և իմաստասերն սիրելի և հոգևոր եղբորդ մեր բան այսք նախկեկանք» բառերով սկսվող դիմումը, վորը նա գրել և ընթերցողների համար, ամբողջովին առաջ բերել:

«Արդ յետինս ի սպասաւորաց բանին Յակոբ անուամբ միայն վարդապետ Շամախեցի կոչեցեալ որ ի ռճիւր Թաւադիս մերում, յորում գրեցուցի և ստացայ զայս զիրք, զոր և կազմել ետու: Այլ և կամեցայ ու պատշաճ տեսի ի վախճանմանէ աստի. զաւանական ամիոցս զսկիւղն առնել նորապէս զայլ և իջանել և հասնել ի մեր ժամանակ ըստ ռճից և ըստ ձևոց նախկնոյդ զաւանական ամիոցս, դնելով և գրելով համառօտաբար հանդէպ Թուրքա-նաց զարս ոմանս և անուանիս, զեղեւութիւնս իրաց և իրակա-նութեանց ոմաց նշանաւորաց անցելոց և ներկայից, որք ի յապագայս պիտոյասցին խնդրողաց, և մանաւանդ զի յայսքան միջոցում ժամանակիս, յորում մեք գոմք, անուանի արքն և նշա-նաւոր եղելութիւնքն, ոմանք յոյժ պատշաճաւորք, մի մնացին յանյալութեան, այլ յայտնիցին և իմանիցին և թէ չարք և եթէ բարիք: Ակն ունելով մասին փոքու վարձու բարեոյ, ըստ աշխա-տանաց մերոց սակաւուց, որպէս բազմաշխատ վիպաբանք ընդու-նին ի Տեառնէ անդ և բարեյիշին ի մարդկանէ աստ Բայց ըստ այսմիկ ժամանակիս ըմբոն վարկայ և բաւական համարեցայ զԵթնեակ զաւազանական տուփս առնել, յորոց առաջնումս դամս

աղյուսակներն սիստեմի մեջ՝ մի ձևի վերածելով բո-լորը, «վորպեազի,—ինչպես ինքն և ստում,—նոր կազմած Գավազանագրքի գրելու ձևը և հասկանալը լինի բոլոր գրքերի ձևով» և այսպիսով պիտանի լինի ընթերցողներին: Այս աշխատանքը Շամախեցին կատա-րել և իր ծերության հասակում՝ 1759 թ., ինչպես այդ մասին գրում և նրա աշակերտ Դուռնիկանոսը, յերբ Շամախեցին կաթողիկոս ընտրվեց ու «յերբ նա իր հասակը լրացրել եր, նրա Ֆիզիկական կարողու-թյունը և ուժը պակասել եյին, իսկ հոգսերն ու ցա-վերը բազմապատկվի»: Այդ պատճառով Սսովածա-տուր կաթողիկոսից մինչև Ղազար կաթողիկոսը (1715—1751 թ.) նա հազիվ հասցրեց Գավազանագրքի շար-քը,—ասում և Դուռնիկանոսը: Շամախեցու մահվանից

սկզբման աշխարհիս դներ, յերկրորդումս դամս կենարարին մերոյ Քրիստոսի կարգել, յերրորդումս զԹուական հայոց կացուցանել, ի չորրորդումս զհայրապետս հայոց գետեղել, ի հինգերորդումս զԹաւադուրս օսմանցեաց դասել, ի վեցերորդումս զԹագաւորս պարսից զՂրաշից կարգել և եօթերորդումս զԹուական մահմե-դականց դներ նաև ըստ հասարակ գրեանց զման և ըմբռնման զգրումս գրեալաց և զըմբռնումս գրքոյս ուղղեցի, զի ըստ կարգի ամենիցն գրեանց լիցի գրումս և ըմբռնումս նորաշէն զաւազա-նացս և մանաւանդ զիտին և ուղղակի եղիցի ձեռնառու ընթեր-ցողաց: Առ այսպէս եօթնակ զաւազանական ամիօք և ուղղակի ձեօք բերեալ հասուցի ի ժամանակս մեր երկամբք բազմօք և ամե-նակարող զօրութեամբ և կամեցողութեամբ Աստուծոյ ի փառս նորին: Ի յօգուտ մանկանց սրբոյ Եկեղեցւոյ ի յիշատակ բարի ի յապագայս իմոյ մեղսաւերի անձինս, այլև իմայնոց ամենից: Վասն որոյ անս խնդրեմ ի հոգեւոր եղբայրցդ իմոյ զի յընթե-նուն ձեր զայս և ի շահին յիշեալիք ի Քրիստոս զիս և զիմա-յինսն յօժար կամօք, զի և զուր յիշեալ լինիցիք հանդերձ ձե-րայնօք ի Քրիստոս յաւուրն աներեկի ամէն:

հետո, 1763 թ., նորընտիր Սիմեոն Յերեանցի կաթողիկոսի հրամանով այս գործը վերջացնում է նրա աշակերտ Դուռնիկանոսը, վորը, տեղին է ասել, Նշմիածնի կաթողիկոսական գիվանի ամենահաջող նոտարներից է յեղել:

Հակոբ Շամախեցու կյանքի սկզբնական տարիները մեզ անհայտ են: Պետք է յենթադրել, վոր նա ծնվել է Շամախի քաղաքում՝ և այդ պատճառով ել կոչվել է Շամախեցի: Մենք չգիտենք նաև նրա ծննդյան թվականը: Չենք կարող ասել նույնպես, թե նրա ծնողները ժամանակի հասարակական փոքր խավերին եյին պատկանում: Ընդհանրապես Շամախեցու մասին մեզ հասել են շատ սահմանափակ և կցկտուր տեղեկություններ: Տարորինակ է նաև այն յերևույթը, վոր Շամախեցու անձնավորութունը մինչև այսօր անհայտ է մնացել մեր պատմական և գրական հին աղբյուրներն ուսումնասիրող բանասերներին, այնինչ նա յերկար տարիներ ընթացքում հայտնի յե յեղել իբրև գիտուն, փորձված և իր աշակերտներից հարգված վաստակավոր ուսուցիչ, վորն Նշմիածնի վանական դպրոցից բաց է թողել աշակերտների մի քանի սերունդ, վորոնց թվումն է նշանավոր Սիմեոն Յերեանցին, վորը Շամախեցու մահից հետո դառնում է նրա հաջորդը: Թե Շամախեցին իբրև ուսուցիչ ինչպիսի մեծ հեղինակություն և հռչակ է ունեցել իր աշակերտների աչքում, այդ յերեվում է Սիմեոն կաթ. Յերեանցու հետևյալ խոսքերից.

«Նաև զհոգևոր ծնողն իմ և զվարժապետս Շամախեցի Յակոբ նրբամիտ Գիտնազգեանս վարդապետ, որ ի ներկայումս իբրև նոր իմն արեգակն փայլի

գիտութեամբ և հանճարով ի սուրբ և յերկնամասն յԱթոռջա ի մէջ վարդապաց»\*:

Հակոբ Շամախեցու արժանավոր ծառայություններից մեկն էլ այն է, վոր նա որինակելի կանոնավորութուն է մտցրել ժամանակի հայաշատ կենտրոնների հետ Նշմիածնի կաթողիկոսական աթոռի ունեցած լայնածավալ գրադրության մեջ, այնքան որինակելի, վոր այսօր պատմական նշանակութուն ունեցող արխիվային այդ նյութերով պարապող մասնագետը և՛ զարմանում է, և՛ պատկառանք զգում դեպի այդ գրագետը, վորի, ի դեպ է ասել, թե քաղաքական և թե հասարակական հայացքները ցած են ամեն քննդատությունից, մանավանդ վոր Շամախեցին իր ժամանակ պատկանելիս է յեղել ավանդապահների բանակին: Այդ ժամանակից մնացած՝ Նշմիածնի գրադրությունների մեծ մասը վերաբերում է տնտեսական-ֆինանսական հարցերին: Նշմիածինը կարողացել եր վոչ միայն բուն Հայաստանում, այլ և հայաշատ վաճառահան գաղութներում, վորպիսին եր Հնդկաստանը, ստեղծել բանկային գործակալությունների նման մի-մի ներկայացուցչութուն: Այդ բոլորին պետք եր հետևել և կանոնավորել: Այս պատասխանատու գործի ղեկավարութունը յերկար տարիներ յեղել է Հակոբ Շամախեցու ձեռքին, վորը հաստատ հիմքերի վրա յե դրել վանքի յեկամուտը: Մեզ են հասել նրա կազմած յերկուսից հաշվեզրքերը, վորոնք աչքի յեն ընկնում իրենց կանոնա-

\* Ինքնաձեռագիր նոտրգիր «Յիշատակարան Սիմեոն վարդապետ (հետո՝ կաթողիկոս) Երեանցու «Լուծմունս արտաքին գրեանց սկսեալ ՌՃՂԲ (1743) և աւարտեալ ՌՃՂԶ (1747) թ.»։ Այս հիշատակարանը գտնվում է մեր Մատենադարանում:

վորությամբ և այսոր գնահատելի աղբյուրներ են մեր տնտեսագետների համար: 1753 թվի ողոստոս ամսից, յերբ Հակոբ Շամախեցին Աղեքսանդր կաթողիկոսի հրամանով տեղապահ և նշանակվում, մինչև 1759 թ. նրա վրա յեն ծանրանում վանքի դրամական հաշիվները, «Ես մեղաւոր Յակոբ վարդապետս Շամախեցի, յայնժամ որքան դրամս, զորս ի հասիցն սրբոյ աթոռոյս ետու և ծախսեցի ի հարկաւոր պէտս սորին կարգաւ զայնս զամենեսեան ի յայսմ զաւտարում»,—դրում և նա իր կազմած հաշվական «գալտարներից» մեկի սկզբում\*:

Կաթողիկոս ընտրվելուց հետո ել նա սկսում և հսկել վանքի գումարների յեւ և մուտքի վրա և յերբեմն վանքի հաշվետառյալներն ստուգում ու վավերացնում և իր կնիքով:

Եջմիածնի հետագա պատմագիրներից մեկը, նկատի ունենալով Շամախեցու մատուցած ծառայությունները վանքին ու անվանելով նրան «այր ճգնաղգեաց և տառքինի քան զամենեսեան հոգեւոս և խմատուն», վկայում և, վոր Շամախեցին Եջմիածնի մեջ մտցնում և կարգ ու կանոն\*\*:

Ինքը Շամախեցին իր կազմած Գավազանագրքում խոսելով Ղազար Զահկեցի կաթողիկոսի ժամանակ Եջմիածնի վիճակի ու նրա ֆինանսական դրության մասին՝ ասում և, վոր Նազիր-շահը 1746 թվին բարկանալով Զահկեցու վրա (ըստ իս՝ պապական քարոզչների դրդմամբ)\*, մեծ ու ծանր արբաւներ (հարկեր) և

պահանջում կաթողիկոսից: Ղազարը հնարավորություն չունենալով ամբողջովին վճարել պահանջած 6000 թուման գումարը, դրա մի մասը վճարում և, ապա հավաքում յեկեղեցական բոլոր վոսիկեհն և արծաթեղեն անոթները՝ մոտ վեց ջորու բեռն ու տալիս Նազիր-շահի կողմից Եջմիածին յեկած հարկահանին, իսկ ինքը, գիշերը վերցնելով իր փոքրավորին ու յեկեղեցական գույքի մի մասը, Ղարսի վրայով անցնում և սահմանը ու փախչում Կարին: Մյուս որը պետական հարկահանը, յերբ իմանում և Ղազարի փախուստը, սկսում և նեղացնել վանքի միաբաններին, ասելով թե՛ դուք եք փախցրել Ղազարին և «ինձ,—ասում և Շամախեցին,—Շամախեցի Հակոբ վարդապետիս, վոր Ղազարի տեղտաւան եյի, կապելով տարավ Յերևանս բերդն ու կալանաւորեց և Ղազարից ստացած գումարը և 12 սնդուկ յեկեղեցական վոսիկեհն և արծաթեղեն անոթներն ուղարկեց Նազիր-շահին ու գրեց թագավորին, թե Ղազարը փախավ, ուստի յեթե կամենում ես, հրամայիր, վոր մնացածն ստանամ տեղապահից ու միաբաններից»: Այնուհետև Շամախեցին նկարագրում և Եջմիածնի ծանր վիճակը Զահկեցու և նրա հաջորդ Պետրոս Բյութուրի ժամանակ, յերբ Եջմիածինը ձեռքից ձեռք և անցնում ու բոլորովին սնանականում և թե այս ժամանակները Եջմիածնում «որքան զրոյցք ու զայլ թակղութիւնք (եղեն),—ասում և Շամախեցին,—չէ գրելի»\*\*:

\* Պատմութիւն վարուց և գործոց Նազրշահ թագաւորին պարսից արարեալ յունեմէ անդլիաղույ մասը Հանուէ՛կոչեցելոյ, Մադրաս, 1780, էջ 141:

\*\* Զեռագիր Դավաղանադիրը, Յերևանի Պետական Զեռագրատուն, № 676, էջ 211 բ., Եջմիածնի տնտեսական ու բարոյական

\* Պետ. Կենտր. Զեռագրատան արխիվ, № 19:

\*\* Զեռագիր Պետ. Կենտր. Զեռագրատան, № 2766:

Բայց Հակոբ Շամախեցու գլխավոր արժանիքը կազմում են նրա գրական և մանկավարժական վաստակները: Նրա ղեպի գրականութունն ունեցած հակումն ու ձգտումն աչքի յեն ընկնում նրա կյանքի հենց սկզբնական տարիներին, յերբ իր գիտության թերին լրացնելու համար Շամախեցին մի քանի անգամ դիմում է այդ ժամանակի հայ մտավոր կենտրոններից մեկը—Նոր Զուղա, ուր նրան մենք գտնում ենք 1731 թ. շահ թահմազի գահընկեցության որերին, յերբ նա գրում էր իր նշանավոր «Շահողարան» կոչված ժողովածուն: Նույն տարին «Հակոբ արեղա Շամախեցին» Նոր Զուղայում ստացել է մի ուրիշ ձեռագիր՝ «Նախերգանք քարոզից, ցանկ բոլոր կանոնական գրոց»\*:

1728 թվին, յերբ նա ձեռք է բերում «Մեկնութիւն ժամագրքի Սոսրովայ և խրատ կրօնաւորաց»-ը\*\*, նա արդեն վարդապետ էր, իսկ նրա վարդապետական կնիքի վրա գրած է՝ 1734 թ.: Այս բոլոր տվյալներն ի նկատի ունենալով, պետք է յենթադրել, վոր նա ծնված պիտի լինի 17-րդ դարի վերջերին կամ 18-րդի սկզբներին: Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր նա ղեռ իր յերիտասարդ հասակից, յերբ ղեռ մի աննշան արեղա յեր, սկսում է իր հաշվով գրքեր գրել տալ և գնել, մեզ հիմք է տալիս յենթադրելու, վոր նա այդ նյութական ապահովությունն ստացել էր իր

անկման այս պատկերը, վորը Շամախեցին անհամար համարել գրելու, գրել է մի ուրիշը՝ Ղազար Ճահկեցու ընտելությունների գոհը—Պետրոս Բյութուրը: Դժվար է առանց քստմեկուս կարգաւ այդ գրվածքը, վորը պահվում է Յերեանի Պետական Ձեռագրատանը, № 675, և՛ 40—51:

\* Պետ. կնար. Ձեռագրատուն, № 3281:

\*\* Պետ. կնար. Ձեռագրատուն, № 1450—1446:

ճնողներին, վորոնք յերևի պատկանում էյին այդ ժամանակի վաճառաշահ Շամախի քաղաքի ունեւոր խավերին: Հենց սկզբից աչքի յեն ընկնում նրա այս արտակարգ գրասիրությունը և մասամբ էլ նյութական անկախ վիճակը, վորոնց շնորհիվ նա ժամանակի հոգեւորականության մեջ բնութւն է պատկաւոր տեղ, իրրե գրավարժ գիտնական, վորովհետեւ «սա խիստ գիտուն էր և տեղյակ կրօնական ու փիլիսոփայական գրքերին ու հմուտ ու տեղյակ ժամանակի գեպքերին ու պատմագիրներին,—ասում է նրա աշակերտներից մեկը,—հանճարեղ մտքով, խելքով, խորհրդով, խոսքով, գործով, ամեն բանի պիտական, վարժ թե հոգեւոր և թե աշխարհական գործերին: Այս պատճառով ժամանակի կաթողիկոսները նրան հանգստություն չէյին տալիս, այլ միշտ նրան աշխատեցնում էյին և զբաղեցնում, վորովհետեւ կաթողիկոսները տաճկաց թագավորներ և մեծամեծների մոտ գնալիս առանց սրա չէյին գնում, և յերբ իրենք չէյին գնում, սրան էյին ուղարկում: Նույնպես և աթոռը յեկած տաճիկներին մեծից մինչև փոքրը սա յեր գիմավորում, ուստի բոլոր յեկողները սրան էյին ճանաչում: Իսկ ժամանակը շփոթ ու խառն էր: Կարելի չէ ասել, վոր Ղազար, Մինաս և Աղեքսանդր կաթողիկոսների ժամանակ, թեև անունով նրանք էյին, բայց կառավարողը և սուրբ աթոռի հոգսը քաշողը սա յեր: Այս բոլորից պատ, սրան հանձնված էր մի մեծ և աշխատանք պահանջող հատուկ գործ, այն է՝ գրագրությունը, վորովհետեւ սուրբ աթոռի գրագիրները սրա ձեռքի տակ էյին և նա յեր սրանց պատվեր տվողը. այդ պատճառով աթոռումս ինչքան կազմած և անկազմ տետր և պատճեններ կան կոնդակների, նվիրակների և ժողովարարության

թղթերի, կաթողիկոսների մահվան ու ընտրութեան վերաբերյալ, նվիրականների և առաջնորդների հանձնարարականներ, շնորհավորական և ուրիշ զանազան տեսակի թղթեր, բոլորը սբա շարադրածն են»:

«Բացի սրանից, սբա վրա յեր ծանրանում մի ուրիշ մեծ և հարկավոր գործ—այն է՝ մայր աթոռի միաբաններին դաս տալը: Կարելի չէ ասել, վոր սբա միջոցով Եջմիածնում ծաղկեցին թե յեկեղեցական և թե իմաստասիրական գիտութեաններն ու քերթողական արվեստը»\*: Շամախեցին իր այս վարչական և մանկավարժական ու գրական գործունեութեանը շարունակում է մինչև իր կաթողիկոս ընտրվելը՝ 1759 թ.: Այդ որվանից նա սկսում է խառնվել նաև քաղաքական հարցերի մեջ: Այս տեսակետից ուշադրութեան արժանի չե Շամախեցու 1760 թ. հուլիսին գրած թուղթը. «առ ատուածազօր կայսրն ոռւսաց վասն պէսպէս նեղութեանց երկրեացս մերոց», ուր կաթողիկոսը շատ ծանր գուշներով նկարագրելով Հայաստանի և Վրաստանի վիճակը, վորտեղ կարմրադուխների (Իրանի) իշխանութեան թուլանալու պատճառով «բազմացան վիշաք և նեղութիւնք մեր յամենայն իրաց և իրականութեանց, այսինքն հաւատոց ուրացութիւնք, բարեգործութեանց խափանմունք, վանօրէից և եկեղեցեաց աւերմունք, աստուածային պաշտամանց լոռութիւնք, մանկանց եկեղեցւոց ի Գրիստոս հովատացելոց գերեմարութիւնք, քաղաքաց և դավառաց և զիւղօրէից ամայութիւնք, ընչից և ստացուածոց կապտու-

թիւնք»\*: Ասպ ծանրանալով լեռնականների արշավանքներից առաջ յեկած թշվառութեանների վրա, Շամախեցին խնդրում է «զազգս մեր ողորմելի և զազգն վրաց հոգալ»: Մի կողմ թողնելով կաթողիկոսական այս թղթի մեջ հիշած պատմական փաստերը և մեր յերկրի վիճակը Նադիր-շահի մահից հետո առաջ յեկած անիշխանութեան ժամանակ, Շամախեցու այս թուղթը հետաքրքիր է առանձնապես այն տեսակետից, վոր այստեղ մենք առաջին անգամ տեսնում ենք Անդրկովկասի յերկու ժողովուրդների՝ հայերի և վրացիների ֆեոդալական ներկայացուցիչների—վրաց Թեմուրազ թագավորի և հայոց կաթողիկոսի միջև քաղաքական հարցերի նկատմամբ դոյութեան ունեցող ներքին կապը և համաձայնութեանը: Այդ ժամանակ Թեմուրազ թագավորն անձամբ գնացել էր Մոսկվա՝ խնդրելու ոռւսների ոգնութեանը, իսկ հայոց կաթողիկոսն Եջմիածնից հանդես էր յեկել իրրե վրացիների համախօս և դաշնակից:

Մեր յերկրի 18-րդ դարի պատմութեամբ զբաղվող մասնագետների ուշադրութեանը հրավիրում եմ այս փաստաթղթերի վրա, իրրե մի կարևոր փաստի՝ հայ-վրացական հարաբերութեանների և ոռւսական որինտացիայի ոռւսոմասիրութեան հարցում: Իր կաթողիկոսութեան տարիներին Շամախեցին, Եջմիածնի իրավունքները պաշտպանելու համար, Պոլսի պատրիարք Հակոբ վարդապետ Զմյուռնացու դեմ մղում է յերկարատև պայքար, վորի մանրամասնութեանները մեր ծրագրից դուրս են:

\* Գաղազնագիրք— Զեռագիր Պետ. Զեռագրատուն, № 676, էջ 211:

\* Պետ. Կենտր. Զեռագրատուն, № 2911. Օրինակ կոնդակաց Թաղովբայ Շամախեցույ և Սիմէոնի Երեւանցւոյ, էջ 143—144:

Այժմ մի քանի խոսք Հակոբ Շամախեցու թողած գրական գործերի մասին: Շամախեցին մինչև իր մահը, վեր անդի ունեցավ եջմիածնում, 1763 թ. մարտի 21-ին\*, շարունակել և իր գրական պարապմունքները: Շամախեցու աշխատությունների մեջ աչքի ընկնող տեղ և բռնում նրա կազմած «Շահողարան» կոչվող ժողովածուն, վերի մասին սկզբում խոսել ենք\*\*:

\* Հակոբ Շամախեցու գերեզմանը գտնվում և եջմածնում, Դալանյի վանքի գավթում և ունի հետևյալ տապանագիրը:

Քրիստոս օրդի հօր միածին  
Դատող ազգիս մեր մարդկային  
Յորժամ գայցես փառօք կրկին  
Առ ի գատել զամենսին  
Ողորմութեամբ յայնժամ քոյին  
Եւ գթութեամբ Աստուածային  
Որ է սրբոյ արեանդ քո գին  
Տեառն Յակօբայ հայրապետին  
Շամախեցի գոր կոչէին  
Յարքայութիւնդ մոյժ երկնային  
Դասեա ընդ սուրբս ամենեսին

Եղև թւականս ՌՄԺԲ և յամսեանն մարտի ԻԱ.

\*\* Շահողարանը գտնվում և Յերևանի Պետական Ձեռագրա-տանը և կրում է № 835—848. գրիչն և Հակոբ վարդապետ Շամախեցին: Ձեռագիրը գրվել և Նոր-Ջուղայում և ավարտվել 1743 թ.: Դրված և խառն գրով՝ բոլորգիր և նոսրգիր: Թեթևահամար չունի: Բացի ձեռագրի գլխավոր հիշատակարանից, վորն այժմ մենք հրատարակում ենք իբրև աղբյուր Նաղիր-շահի շրջանի պատմության, «Շահողարան»-ի մեջ պատահում են տասից ավելի մանր հիշատակարաններ, ուր Շամախեցին խնդրում և իրեն հիշել, իբրև այս գերքն ստացողի: Այդ հիշատակարաններից կարելի չէ հիշել հետևյալները.

ա) Կանոնական ցանկի վերջը. «Շարակարգեցի զցանկս զայս ԻՌՃ և ձ (1731) թուոյն և ի մեհեկի ամսոյն Ժ և հնգուոմս, որ

ժողովածու չէ, զանազան, մեծ մասամբ կրոնական, յեկեղեցական բնույթ ունեցող նյութերի, վորոնք մեր հեղինակի մտքի ծնունդն են և վորոնցով կարելի չէ գաղափար կազմել դարաշրջանի սահմանափակ մտավոր մակարդակի և աշխարհայացքների մասին: Ծանոթա-նալով այս ժողովածուի նյութերին (քարոզներ, տոմար, կանոնագրքի այբբենական ցանկ, խրատներ, Հակոբ Շամախեցու վոտանավորներ, Այսմավուրքի ցանկ, յաղագս նիւթաց աստուածագործ մեռնին, դաւանութիւնք չորեքտասան գլխով), տեսնում ենք, վոր մեր հեղինակը կամեցել է տալ մի հանրագիտարան, վորը հարկավոր եր ժամանակի գիտնականին. հենց

Լըն աւուրս երկրորդի ապրիլի ամսոյ: Ի Հայրապետութեան լուսանկար և սրբոյ աթոռոյն իլման Միածնի տեառն Աբրահամու հեղահողոյ և առաջնորդութեան Նորոյս-Ջուղայի տեառն Աստուածատրոյ Սորիկ Սոփույ և արհեստակապոսի և ի թագաւորութեան պարսից շահ Թահմազի, որ արդ նստի ի քաղաքամայրս Ասպահանըն Նորո-Ջուղայում ընդ հովանեաւ սրբոյ և շնորհաւոյ ուխտիս Ամենափրկչի:

բ) «Շահողարան»-ի II մասի ԺԳ տետրակի վերջը և I մասի 8-րդ տետրակի վերջը գրած հիշատակարաններն արդեն հիշել ենք: Հարկավոր ենք համարում «Շահողարան»-ի գլխավոր հիշատակարանից մեջ բերել հետևյալ հոդվածը, ուր Շամախեցին ընթերցողին ծանոթացնում և այդ գրքի գրութեան հանգամանքնե-րին. «Ես ամենատարտամ և մշտապէս զառ գործս բարիս Յակօբ անպիտան և անարդիւն վարդապետս Շամախեցի քաղցրա-ճաշակ խորտակելի սեղանս այս և զհոգեկեցոյց մատենաս, վոր կոչի Շահողարան, ի վաղուց հետեւ սկսեալ յայսմ ամի զրաւի-ցի, և ի մի հաւաքեալ կազմեցուցի և գլխափակ սրտի իմոյ լցու-ցի և ուրախ եղէ:

Եւ արարի զոս յիշատակ յոգնամեղ անձինս իմոյ նաև ըստ մարմնոյ ծնողաց իմոց հանգուցելոցն ի քրիստոս Ամոնայն և Մարգարտին, այլ և արեամբ ընդիս հպեցելոցն իսկ ի վայելու-մս

այդ նպատակով ել գիրքն անվանել և Շահողարան, բայց նրանից ստացած շահը շատ վողորմելի և աղքատիկ եր իր նախապաշարուհիներով լի հասկացողություններով և գաղափարներով: Չպետք է մոռանալ, վոր ժամանակը սրանից ավելին չէր պահանջում մեծ գիտնականի համբավ վաստակելու համար, և Շամախեցին, իր դարի մեծ ուսուցիչը, տիկ և այն, ինչ վոր գիտեր: Յնվ վորքան խղճուկ ու հետադիմական և այդ գիտական պաշարը: Բայց ինչ կարելի չե ասել, քանի վոր սա դարաշրջանի պատկերն է:

Շամախեցու յերկրորդ գրական գործը նրա շարադրած և ստացած «Գավազանագիրք»-ն է, վոր իրոր շատ խնամքով կազմված մի լրիվ ժամանակագրություն է (քրոնիկոն), սկսած ամենահին ժամանակից: Այստեղ ել Շամախեցու աղբյուրները դարձյալ աստվածաշունչն ու հետո՝ հայ պատմագիրներն են: Շամախեցու աշակերտ Ղուենկիանոսը «Գավազանագիրքի» հիշատակարանում գրում է, վոր այս գործը Շամախե-

և ի յօդուտն իմաստասեր մանկանց նորոյ Սիօնի սրբոյ եկեղեցւոյ:...

Արդ անուանեցի զսա Շահողարան, վասն զի գրադում Շահողական բանս պարունակէ ներ ինքեան, որովք և շահէ զընթերցողն իւր: Բայց զբանս ի սմա պարփակեցեալս ոչ բոլորապէս ես բաղմածոյս ժողովեցի, այլ զայլոց արեւգունից արանց զժողովեցեալսն գրեցուցի և գրեցի, ընդ որս և զմասն ինչ ժողովեալ իմ առագրեցի, և զամենայն ի սմա եղեալ բանս ի յայրուքեանական ցանկս շարահաւաքեցի բազմօր աշխատութեամբ և ապա միացուցեալ կազմել ետու:

Այս հատվածի անմիջական շարունակությունը կազմում է Թահմազ Ղուլի խանի արշավանքների նկարագրությունը, վորն իբրև հավելված ամբողջովին առաջ ենք բերում գործիս վերջում:

ցին սկսել և իր ծերության որերին, «յիբը հասակն առել եր, կարողությունը պակասել, և հոգսերն ու ցավերը բազմապատկվել էյին», ուստի այդ գործը Շամախեցին չի կարողանում ավարտել ու հասցնում և մինչև Ղազար Ճահկեցու որերը և մեռնում:

Նրա գործը շարունակում է Ղուենկիանոսը:

Շամախեցին փորձել է նաև վստահավորներ գրել. իր բանտարկություն ժամանակ գրել է մի ամբողջ գիրք՝ «Հաց նեղելոց»\*, ուր խոսում է աղոթքի ուժի մասին, իսկ «Շահողարան»-ում առաջ բերած նրա բանաստեղծությունները նույնպես սխալաստիկ կնիք են կրում:

Շամախեցու ամենակարևոր գործը—նրա ընդարձակ պատմությունը, վորի մասին ինքը մի քանի անգամ հիշում է մեր հրատարակած՝ Նազիր-շահի պատմական հոդվածում—զեռ գտնված չէ:

Շամախեցու գրական-քաղաքական և հասարակական գործունեություն զնահատություն համար կարևոր տեղ երունում նրա գրած թղթերի ու կոնդակների ժողովածուն. սրանք եյական նշանակություն ունեն գարաշրջանի ուսումնասիրություն համար, սրանցից հրատարակում ենք ուսուսաց կայսեր անունով ներառ գրած թուղթը:

Դ-ր ՍՄԲ. ՏԵՐ-ԱՎԵՏԻՍԻԱՆ

\* Գիրք աղոթից, որ կոչի հաց նեղելոց շարադրեցեալ ի Յակոբայ արհիեպիսկոպոսէ Շամախեցոյ ի կալանաւորութեան իւրում ի ՌՃՂն Թուականի հայոց և ապեցեալ ի հայրապետութեան տեառն Յակոբայ սրբ. կաթողիկոսի ամ. հայոց շարահիւսողի գրբոյս յամի տ. 1760:

**АКОП ШАМАХЕЦИ. „Походы Тахмас-Кули хана (Надир-шаха) и избрание его шахом“.**

(Источники по истории Армении XVIII века. Армянский текст с предисловием и примечаниями).

(РЕЗЮМЕ)

В первой четверти XVIII века Закавказье, а в особенности его южная половина, экономически было тесно связано с Ираном, и потому Турции не удалось прочно обосноваться в этих областях. Когда Турция, пользуясь временной слабостью Ирана, захватила часть Иранского Азербайджана, Армению и Грузию, она не смогла их удержать, так как иранская ориентация в этих областях была очень сильна.

Со времен Шах-Аббаса I в экономической жизни Ирана видное место занимали джюльфинские армянские купцы.

После Шах-Аббаса I, когда иранское государство стало развиваться, авганцы в 1709—14 г.г., под предводительством Мир-Вейса захватив столицу Ирана—Испахан, свергли слабоумного шаха Хусейна. Появление авганцев в Иране создало там полную анархию. Пользуясь создавшимся в Иране положением, из соседних сильных государств—Турция захватывает иранские земли. Турция появилась в Иранском Азербайджане и дви-

нула свои войска в Армению и Грузию, Россия же захватила берега Каспийского моря.

В это критическое для Иранского государства время на арену выступает полковсдец бежавшего от авганцев царевича Тахмаса, Тахмас-Кули хан, будущий Надир-шах, который быстро очищает Иран от захватчиков. Эчмиадзинский монах Акоп Шамахечи, современник и отчасти очевидец этих исторических событий, написал историю его походов. Русский перевод этого труда издан нами в Тбилиси в 1932 году под заглавием: „Походы Тахмас-Кули хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахечи“.

По словам Акопа Шамахечи, Тахмас-Кули хан 4-го ноября 1729 г., выгнав из Исфахана предводителя авганцев шаха Ашрафа, престол передает шаху Тахмасу. После этого Тахмас-Кули хан обращает свое оружие против турок и в очень короткий промежуток времени отнимает у них Хамадан, Урмию, Кирманшах и Тавриз.

По взятии города Герата Тахмас-Кули хан, арестовав шаха Тахмаса, объявляет шахом его сына младенца Аббаса. В эти дни Шамахечи находился в Новой Джульфе Исфаханской и был очевидцем этого переворота. В дальнейшем Акоп Шамахечи кратко передает о походах Тахмас-Кули хана против лезгин и о взятии Шемахи, после чего Тахмас-Кули хан очищает Армению и Грузию от турок. Акоп Шамахечи кончает

свою историческую запись воцарением Надира в Мугани. В этой работе Шамахечи кратко рассказывает о событиях, которые подробно изложил другой современник, армянский историк Абраам Кретацци.

Акоп Шамахечи — уроженец города Шемахи. Будучи одним из просвещенных и грамотных людей своего времени, он долгие годы был преподавателем в Эчмиадзинской школе и одновременно занимался литературными трудами. После себя он оставил несколько работ. В 1759 году он был избран армянским католикосом, а через год, т. е. в 1760 г., он первый из армянских патриархов обратился к России с просьбой оказать помощь двум братским народам — армянам и грузинам. Текст этого послания к Елизавете Петровне приложен к настоящему труду.

Скончался Шамахечи 21 марта 1763 года и был похоронен в Вагаршапате, в монастыре Гаяне.

Изданный нами армянский текст походов Тахмас-Кули хана приведен по автографу Акопа Шамахечи из его рукописи „Шаохаран“, хранящейся теперь в Центр. Библиотеке Рукописей Арм. ССР (№ 835—848).

Д-р С. ТЕР-АВETИСЯН

**ԹԱՀՄԱԶ-ՂՈՒԼԻ ԽԱՆԻ (ՆԱԴԻՐ-ՇԱՀԻ) ԱՐՇԱՎԱՆՔ-  
ՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՇԱՀ ԸՆՏՐՎԵԼԸ\***

(Աղբյուրներ XVIII դարի հայոց պատմության)

Արդ՝ գիտելի է և այս, զի ի ժամանակին յայնմիկ, յորում էր թուականս մեր ոճ և հ. Աղուանք ի Ղանդահարա ելեալք բազմօք զօրօք՝ եկին առին զՍպահանս թագաւորանիստ քաղաքն ի ձեռաց Շահսուլթան Հիւսէինին, որ էր յազգէն Շահխմայէլի, և տիրեցին բազմաց քաղաքաց այնց կողմանց, որոց գլուխ էր Մահմադ ոմն, որ և եղև թագաւոր անդ: Յայսմ ամի՝ թուականս մեր էր ոճհա. ի հոկտեմբերի ժր. սոյնպես և թագաւորութեան պարսից սահմանակիցք թշնամիքն, յիւրաքանչիւրոց կողմանց յարեան և քաղաքս և զգաւառս առին յաշխարհէն պարսից և տիրեցին. և այսպէս կարի նուազեցան զգլբաշքն<sup>2</sup>:

Սակայն որդի մի Շահ Սուլթան Հիւսէինին, թահմադ յանուն, որ փախուցեալ էր ի Սպահանայ, ի յԱղուանից, և կայր ի Խորասան ի Մաշադ քաղաքին՝ որ և ժողովէ առ ինքն ի յայնս կողմանս եղեալ զԳլբաշքսն և թագաւորէ անդ: Եւ կացուցանէ զօրապետ՝ առ ինքն գումարեալ զօրացն՝ զայր ոմն յաջողակ, հանձարեղ և քաջամարտիկ. որ լինի ի նոյն երկրէն Խորասանայ, և ի Բաւարտն կոչեցեալ գաւառէ, որ կոչի անուամբ Նաղբըր գուլի<sup>3</sup>:

\* Հիմնականում պահվում և Շամախեցու ուղղագրութիւնը և կետագրութիւնը:

Զայս անունն բառնայ ի նմանէ Արքայորդի Շահա-  
ցեալն թահմազ և անուանէ զնա թահմազ-ղուլի խան՝  
յիւր անունն կոչելով զայն, վասն՝ առաւել սիրոյն, որ  
առ նա: Զոր և պատրաստութեամբ զօրաց բազմաց,  
առաքեաց ի Սպահան ի վերայ Աղուանից, որք կային  
տակաւին անդ, որ և եկեալ յաղթեաց զգօրսն Աղու-  
անից, որոց զլուխ էր Շահ-Աշրաֆն, և փախուցեալ  
զնա ի Սպահանայ՝ էառ զնա և նստաւ անդ:

Եւ էր թուականս մեր ոճճը. ի նոյեմբերի դ.: Իսկ  
յետ աւուրց քանեաց ետ բերել զԱրքայորդին իւրե-  
անց զՇահթահմազն և նստոյց ի հայրենի Աթոռն իւ-  
րեանց:

Եւ զկնի այսորիկ առեալ զբազում զօրս և մեծաւ  
պատրաստութեամբ զնաց ի վերայ Շիրազայ, զոր և  
էառ ի յԱղուանից, հանդերձ քաղաքօք այնց կողմանց:  
Եւ անտի զնաց ի Համադան, և ի Յորմի և Քրմանշահ,  
էառ և զնոսա հանդերձ դաւառօք նոցա ի յՕսմանցւոց:  
Եւ անտի չոքաւ ի Թարվէզ՝ էառ և զնա ետ: Սոյնպէս  
և զԱրտաւիլ էառ: Եւ ի Թարվիզոյ՝ սակս իրիք հար-  
կաւորի պատճառի դարձաւ վաղվաղակի ի Խորասան,  
և զնացեալ պաշարեաց զՀերաթ քաղաքն Աղուանից,  
և էառ զնա ի նոցանէ և տիրեաց նմա: Արդ՝ զայսքան  
քաղաքս զգաւառս իրրեւ էառ և յաշնոցեաւ գործն իւր  
և զօրացաւ, յայնժամ սկսաւ թշնամանել խորաման-  
կութեամբ զՇահթահմազն՝ և անբաղդ և անարի և գի-  
նեմով զնա ասելով միշտ առաջի զօրաց իւրոց: Ուստի  
և ի Հերաթայ անտի դարձեալ եկն ի Սպահան չար  
խորհրդովք և բարի ասացուածովք պատրեաց զսիրտս  
զօրացն և ընկէց զՇահթահմազն ի թագաւորութենէն,  
և առաքեաց զնա ի Խորասան ի քաղաքն Սաւղբար,  
յորում պահել զնա զգուշութեամբ հրամայեաց:

Իսկ ի տեղի նորա կարգեաց թագաւոր զփոքրա-  
գոյն մանուկ որդի նորա և անուանեաց զնա Շահ Աբաս:  
Յայսմ ամի թուական մեր էր ոճճա, յօգոստոսի իբ՝:  
Բայց ոչ կամեցաւ մնալ ի Սպահան զՇահ Աբասն Մու-  
նուկ, այլ յղեաց ի Ղազրին, փոխելով և զթախդն: Եւ  
յետ իրակութեանս այսորիկ զամենայն զգօրսն իւր  
առեալ զնաց ի վերայ Լոռստանայ, և հնազանդեցոյց  
զնոսա զամենեւեան: Եւ անտի զնաց ի վերայ Բաղ-  
դադայ և պաշարեալ զնա, կարի նեղեաց զնոսա: Լուեալ  
թագաւորին Օսմանցոց՝ զգօրս բազումս հանդերձ զօ-  
րապետիւ միով՝ որ կոչիւր Օսման փաշայ, մականուամբ  
«թփալ», ի Բաղդադ ի յօգնութիւն, նոցա յղեաց:  
Զգալստենէ նորա իրրեւ լսէ խանն թահմազղուլի, ընդ  
յառաջ նմա զնայ, և հանդիպին իրերաց պատերազմաւ.  
յայնժամ պարտի կողմն Ղալբաշից և դառնայ ի փա-  
խուստ: Բայց վաղվաղակի խանն թահմազղուլի զգօրս  
կազմէ յետ ամսօրեայ աւուրց և կրկին զնայ ի վերայ  
Օսման փաշային յանկարծակի, յաղթէ զգօրսն և փա-  
խուցանէ, և սպանանէ զնոյն ինքն զգօրապետ Օսման  
փաշայն: Եւ ապա անդրէն դարձեալ զնայ ի վերայ  
Բաղդադայ և նստի անդ:

Իրրեւ տեսանէ զայս Ահմէդ փաշայն, տէրն Բաղ-  
դադայ՝ զուխտ իմն խաղաղութեան ընդ նմա զնէ հան-  
դերձ յուսով իւրիք՝ առ յապայն կատարելի, որում և  
հաւանի խանն: Այս եղև ի ոճճդ թուին. վասն որոյ  
յարուցեալ անտի վերստին եկն ի Թարվէզ, ի Գիլան  
ոչ զնայ. վասն զի յորժամ Շահթահմազն զնաց ի  
Սպահան նստաւ ի յաթոռն հայրենի, յայնժամ ուրա-  
խացեալ ըռուսացն կամօք իւրեանց ելին ի Գիլանայ,  
ի Բաքուայ և ի Դարբանդայ և զնացին յաշխարհն  
իւրեանց:

Նմին իրի և ի Թարվիզոյ անտի գնաց ի Շամախի,  
էառ զնա ի ձեռաց Լէկզեաց, հանդերձ վիճակօքն նորա  
և փախոյց զԼեկզիսն ի յերկիրն իւրեանց ի Գաղս-  
տան՝: Իսկ ինքն չուեալ ի Շամախոյ և եկն ի վերայ  
Գեանջայի, և պաշարեաց զբերդն յորում էր Գեանջալի  
փաշայն հանդերձ օսմանականօք զօրօք: Եւ անտի  
յղեաց զԽանձան Խանն հանդերձ զօրօք ի Թիլֆիզ. որ  
գնացեալ էառ զնա ի յօսմանցւոց: Առաքեաց նաև  
անտի զզօրապետ հանդերձ զօրօք ի Սիւնիս և ի Նա-  
խիշլան, որք գնացեալ հանին զամենայն Օսմանցիս  
և փախուցին և ինքեանք տիրեցին նոցա: Իսկ ինքն  
նեղեաց զամիսս քանիս՝ պէսպէս մեքենայիւք զԳեան-  
ջայի բերդն, բայց ոչ կարաց առնուլ զնա: Ուստի  
եթող անդ զբաւական զօրս և ինքն ի սճճդ. թուա-  
կանիս յարուցեալ անտի գնաց ի վերայ Ղարսայ, յո-  
րում կայր բաղմօք զօրօք Գեօրիուլու օղլի Արդուլա-  
փաշայն որ էր Սարասկար, նա՝ առաջին նուագին ել  
ընդդէմ սորա և պատերազմեցան, և յերկուց կողմանց  
ևս անկան արք: Նա դարձաւ ի բերդն, այլ ոչ կարաց  
ելանել ի բերդէն և մարտնչիլ ընդ սմա: Իսկ սա ևս ոչ  
կարաց կալ ի վերայ բերդին Ղարսայ, այլ՝ էառ զա-  
մենայն զօրս իւր և դարձեալ անդրէն եկն ի վերայ  
Երևանայ բերդին, յորում կային Օսմանցիք ամրա-  
ցեալք: Սակայն խանն Թահմազդուլի իրրև եհաս ի  
յԱպարան նահանգ, յայնժամ Թրակացի Աբրահամ  
Կաթողիկոսն ելեալ ի սրբոյ Աթոռոյս գնաց ընդ յա-  
ռաջ նորա ի տեսութիւն նորին, սրում իրրև հանդի-  
պեալ էր արժանաւոր ընծայիւք, որ և սիրով և քաղց-  
րութեամբ ընկալեալ՝ յոյժ պատուեալ էր զՀայրապետն  
մեր, և ընդ ինքեան ի սեղան բազմեցուցեալ: Ասացեալ  
էր նաև թէ, Խալիֆա, կամիմ գալ յԻւջբիլիսէ այն ի

զիարաթ, զի լուեալ եմ թէ զադիմի օճաղ է և զիա-  
թէթդեհ: Նոյն ժամայն և հրաւիրէ զնա և կաթողի-  
կոսն Աբրահամ ի սուրբ Աթոռս: Որ և հանդերձ բազ-  
մամարդ բանակիւն եկն և իջևանեցաւ հուպ սրբոյ  
Աթոռոյս, որ էր ժամ երրորդ: Վասն որոյ խոհեմաշատ  
Հայրապետն մեր զըստ արժանաւոյն զկերակուրս պատ-  
բաստեալ տարաւ ի բանակն ի վրան խանին, հանդերձ  
ընծայիւք, զորս և սիրով առեալ շնորհակալ եղև զՀայ-  
բապետէն մերմէ և զմեծագին և զոսկեթիւ զիպակեայ  
խլայս ազոյց, և բաղում օգտաւէտ և յուսադրական  
բանա խօսեցաւ ընդ նմա: Աստանօր վստահացեալ Հայ-  
բապետին մերոյ յոգնիմաստի, խնդրեաց ի նմանէ, զի  
որպէս օրէն է ասէ միաբանիւք զգեստաւորեցելովք  
եկեացուք աստ և փառօք տարցուք զքեզ ի Տաճարն  
սուրբ, և նա հրամայեաց առնել այնպէս: Վասնորոյ  
խոհեմալի Հայրապետն մեր Տէր Աբրահամ խկոյն  
դարձաւ ի սուրբ Աթոռս զգեստաւորեցաւ ինքն, սոյն-  
պէս և զեկեղեցականսն զգեստաւորեցոյց և խաչվառօք  
և մոմեղինօք՝ և բազմութեամբք կարգաւորաց և հասա-  
բակ միաբանից ելեալ ի սրբոյ Աթոռոյս ունելով ի  
միջի մերում զՀայրապետն մեր, հեծեալ ի ձի, գնացաք  
յօրինաւոր և կարգաւոր ընթացմամբք ի դուռն վրանին  
բազմագօր խանին Թահմազդուլոյ, որ իրրև լուաւ  
զգնալոյն մերմէ, իսկոյն ել ի վրանէն իւրմէ, և նստաւ  
ի ձի, հրամայեաց և Հայրապետին մերոյ ձիաւորիլ՝ և  
ձիաւորեցաւ: Իսկ մեք եկեղեցականքս յառաջ մտեալ  
նոցա երգասացութեամբ և փառաւորութեամբ զարմա-  
նալեաւ տարեալ մուծաք զնա ի սուրբ և հիացուցիչ  
տաճարն: Զոր իրրև ետես սքանչացաւ յոյժ և հիացաւ,  
որ արդարև սքանչանալի և հիանալի իսկ էր. քանզի  
ի ժամանակիս այսմիկ՝ սուրբ տաճարս այս գերագու-

նապէս գեղադարեցեալ էր ոսկեզօծ պատկերօք և ծաղկօք, և եկեղեցական անօթիւք և պաշտօնեականօք բազմութեամբ հոգեկանօք և մարմնականօք: Եւ մանաւանդ՝ կարի վարմացուցիչ էր տեսողաց սուրբ և միածնաէջն հոգ, զորմէ այժմ ոչ ըստ արժանաւոյն կարեմ վիպաբանել վասն փութոյս, ևս առաւել զի ի յայլում պատմութեանն՝ բացայայտեալ եմ զայնմանէ պցանկալւոյն հոգւոյս: Վասն որոյ միայն զայս ասեմ, զի էր և է որպէս զսիւն լուսեղէն կանգնեցեալ ի միջափնոջ սրբոյ և մեծի տաճարիս, որ զտեսանողսն իւր հիացուցեալ զմայլեցուցանէր: Որոյ առաջի կացեալ Խանին եհարց զնմանէ, նոյնպէս և զայլոց իրաց, ընկալաւ ի Հայրապետէն զպատկանաւոր պատասխանիս, և շրջադայեաց յեկեղեցին, և նստաւ յաթոռ առաջի աւագ բեմին, և հրամայեաց աղօթել և գերզս ասել: Եւ մեք սկսաք գերեկոյեան կատարել զպաշտօն զի ժամ խիկ էր: Եւ յետ աւարտման աղօթիցն և երգասացութեանց օրհնել սկսաւ զխանն տաճկերէն լեզուաւ Հայրապետն մեր, վասնզի կարի հմուտ էր տաճկի բարբառոյ և ճարտասան: Զոր լուեալ յոյժ ուրախացաւ և հեշտացաւ և յարուցեալ ի յաթոռոյն համբուրեաց զսուրբ Աւետարանն զոր ունէր ի ձեռին Հայրապետն մեր: Եւ հրամայեաց գոնձապետին գերեք հարյուր փլօրիս տալ, որ և ետ նոյն ժամայն: Եւ ապա ելեալ՝ գնաց ի վրանն իւր: Եղև այս ի ուձձդ. թուականիս մերում. ի մուսն յունիս ամսոյ՝:

Յայսմ ժամանակի էր Աթոռակալ սրբոյ Աթոռոյս՝ շնորհածին հայրն իմ բիւզանդացի Տէր Ալեքսանդր եպիսկոպոսն յոգնիմաստ, զՍա երկոտտասն աւուրբք յառաջ՝ քան զգնալն իւր նախապէս առաքեաց Հայրապետն մեր՝ ընդ յառաջ մեծի Խանին, որ և ի գնալն

իւրում անկանեցեալ էր ի ձեռս Օսմանական ճանապարհադիրտաց, որք ըմբռնեալք կամեցեալ էին սպանանել, բայց և զի զխտապետն ի ծանօթից էր լեալ՝ վասն որոյ ոչ էին սպանեալ, այլ ողջ և անջնաս եկն դարձեալ ի սուրբ Աթոռ: Դարձեալ սա ի ժամանակիս մշեցի Աբրահամ կաթողիկոսին որ յղեալ էր ի յերեւելան սակս իրակութեան սրբոյ Աթոռոյս, որոյ ի դատնալն անտի, փախստական զօրք Օսմանցեաց կալեալ զսա մերկացուցեալ էին և զամենայն ինչս առեալ և տիգրու խոցեալ զթիկնամէջն: Բազմավշտակիրս այս՝ յիրաւի է կարի աշխատաւոր և երախտաւոր յամենայն կողմանց, և հարադատն որդի սրբոյ Աթոռոյս: Որում Տեր հատուցէ զվարձս բարիս:

Դարձցուք զբանս մեր ի կարգ պատմութեան. քանզի խանն Թահմազ-զուլի ի յերրորդումն աւուր չուարեալ ապտի, գնաց ի Փարսքարն դեօղն և անդ լուաւ թէ՛ Սարասկար Աբդուլլահ փաշայն ելեալ է ի Դարսայ և եկեալ է ի յԱպարանն գաւառ և զայ ի վերայ քո:

Յայն սակս զամենայն զօրս իւր փութով զուժարեաց առ ինքն, և չուեալ անտի առ կողմամբն բերդին Երեւելանայ գնաց ի տափն Եղևարդա գեղջն: Եւ անտի զամենայն ծանրութիւնսն բանակին որոշեալ յղեաց ի կողմն Գեղամայ ծովակին, իսկ զքաջագոյն պատերազմողսն առեալ առ ինքն մնաց անդ որք լինին ժր, և կամ իս. հազարք (որպէս ասէին):

Եւ շրջեալ ի տափի անդ՝ զբարձրաւանդակ բլուր մի գտեալ, զայն ընտրեաց առնել իւրեանց տեղի ամբողի, որ կոչիւր ի տաճիկ լեղուս «Ախիթափայ», որ է յարեկա կոյս Եղևարդայ գեղջն. մերձ գետոյն Հրատանի, որ այժմ ասի Զանդի: Շուրջ զբլուրն այնու զքարեայ պատնէշս մարդաշափ կանգնեցուցանել հրա-

մայէ զօրաց իւրոց, որ և կատարեն իսկ վաղվաղակի: Զայս՝ այնու մօռք առնէ, իբր-թէ, եթէ ի պատերազմին մեք յաղթիցուք, յայնժամ փախստեալքս մտեալ ի սա զերծցուք թերևս, և աստի մարտիցուք ընդ նոսա: Յաւուր յայնմիկ, գայ հիւսիսակողմն թիկամբն յԱրայի լեւինն փաշայն Արդուլահ, հարիւր հազարօք զօրօք (որպէս ասէին), և բնակէ ի ստորոտն նոյնոյ լեւին հանդէպ զօրացն պարսից, վասն ամբողջեան տեղւոյն: Զոր տեսեալ հնարագէտ խանին Թահմաղայ, խորհի, զնոսա հնարաւ իւրք իջուցանել ի տափ անդր, վասն որոյ՝ յառաջագոյն զօրսն որոշէ ի գունդս գունդս և ի նոցանէ զոմնս ի դարանակալութիւնս առաքէ, և զոմնս առեալ ընդ ինքեան՝ կանգնէ ի գլուխն պատնիշապատ բլրին, սակայն այնքան խիտ կացուցանէ զզօրսն, մինչ զի տեսանօղքն ի հեռուստ՝ զժռ, ըն ե. կարծեն զոր: Զայս ի վաղիւն ընդ առաւօտն իբրև տեսանեն Օսմանականն զօրք յիրաւի փոքր կարծելով, պատրին և յոչ ինչ համարելով սրտապնդին՝ և չուեալ անտի իջանեն ի տափն, զի անցեալ դնացեն ի բերդն Երևանայ, յորում ամրացեալք կային զօրք Օսմանեցոց: Յայնժամ ուրախացեալ խանին՝ վաղվաղակի իջանէ ի բլրոյ անտի հանդերձ զօրօք՝ և հասանէ ի վերայ նոցա: Խմբի պատերազմն. հաղթահարին սաստկապէս, և ի փախուստ դառնան Օսմանցիք: Եթէ սրպէս, աստ ոչ զբեմ մանրամասնաբար, քանզի ի յայլ պատմութիւնս գրեալ եմ զայնս՝:

Բայց աստ զայս միայն գիտասջիք, զի յետ պատերազմին՝ ի թուին զգիտելունս անկելոց, գտանին ի յՕսմանցոց խռ. անձինք, և ի Պարսից ժե. և կամ քսանք: Ընդ որս և Քեօրփուլու օլլի՝ սարասկար Աբ-

դուլահ փաշայն մեռանի: Եղև իբրև այս յաջողութիւնս աստ մեծի խանին, ուստի զայն բլուրն կոչել հրամայեաց այնուհետեւ «Մուրադ-թափայ»: յորոյ վերայ շինել հրամայեաց խարտեցեալ քարիւք զշինուած ինչ, ընդ ձևոյ վրանին իւրոյ, և ի ներքոյ նորայ զջրոյ համբարս հաստատել: Զորս և շինեցին և կատարեցին իսկ: Որոց շինեցուցանօղ վերակացուն էր Սրբոյ Աթոռոյս միարան ոմն Ստեփաննոս վարդապետ անուամբ, որոյ ձեռամբն շինեցաւ, որ կայ մինչ ցայսօր<sup>10</sup>: Եւ ապա զզօրս կացոյց ի վերայ ամուր դղիկին Երևանայ, առ ի պահել զայն բզգուշութեամբք, զի մի ելեալք փախիցեն Օսմանցիք: Իսկ ինքն առեալ զզօրսն իւր ել ի լեռն մեծ Աղմաղան ի հովանոց, վասն զի աւուրք ամարայինք էին, որ է յարեւից կուսէ Երևանայ, յորմէ և ոչ հեռագոյն իսկ: Եւ մինչ աստ էր՝ Գեանջալի փաշայն որ կայր ի բերդումն Գեանջեայի՝ հնազանդեալ ել անտի, հանդերձ զօրօքն իւրովք և թաթարի Սուլթանին, և եկն առ ոտս քաջայաղթ խանին: Որ և սիրով և քաղցրութեամբ ընկալեալ զնոսա խլայեաց և յուզեօրեաց յերկիրն իւրեանց: Արար աստանօր և զհարսանիս (անուելը բաց և թողած) անուամբ որդւոյ իւրոյ, նաև (անուելը բաց և թողած) անուամբ եղբօր որդւոյն իւրոյ:

Սկսաւ իբրև տապալդին օգն ամարայնի յեղափոխիլ ի հովութիւն, յայնժամ չուեաց ի լեռնէ անտի հանդերձ զօրօք իւրականօք բազմօք և գնաց ի վերայ Ղարսայ: Բայց ի գնալն իւրում զասպատակաւորս առաքեաց ի Բայազիդ և ի Կաղզվան, և ինքն գնացեալ նրստաւ ի վերայ Ղարսայ բերդին, և յամենայն կողմանց ի նեղս էարկ զքաղաքացիսն: Անտի ևս առաքեաց զասպատակաւորս ի մերձակայ և ի հեռակայ գաւառսն նո-

բին, որք և գնացին այսինքն Ղալղուլի, ի Ջաւախէթ, ի Չըլքըր, ի Դեօլա, յԱրտահան, յՕլթին, ի Նարիման. և ի յԵրզրումայ մերձակայսն՝ և քանդեալ աւերեցին զայնոսիկ նահանգսն, և զամենայն ի ձեռս անկեալ բնակիչսն նոցա բոլոր տամբք ամենիւք, և ստացուածովք իւրեանց քչեցին՝ և առեալ ածին ի բանակ անդր: Սոյնպէս ի Բայազէդ և ի Կաղզվան գնացեալ ասպատակաւորքն՝ բերեալ զաւարս բազումս ածին ի բանակ մեծ:

Յորժամ զայս տեսին և լուան Ղարսեցիք՝ խոստացան զբերդն Երեւանայ դատարկել և տալ նմա. վասն որոյ յղեցին զոմանս ի մեծաւորաց իւրեանց ի յԵրզրում սակա այսր խորհրդոյ: Որք և միաբանեալք ի յԵրզրում անտի, զարս երեւելիս որպէս զդեսպանս առ յաջողարխտ խանն Թահմազդուլի վասն դատարկեցուցանելոյ զԵրեւանայ զբերդն: Չայս իբրև լուաւ խանն, ուրախացաւ և խլայեաց զդեսպանս. ընդ նոսա և զխան ոմն կարգեաց, գալ յԵրեւան, և զբերդն դատարկել: Որք և եկալ աստ դատարկեցին զբերդն և ի միջի եղեալ Օսմանցիքն ելեալք անմիաս, գնացին յաշխարհն իւրեանց հանդերձ ստացուածովք իւրեանց, տանելով ընդ ինքեանս զկէս պատերազմական գործիսն, որ էր ի իր. սեպտեմբերի ամսոյ: Ուստի խանն մեծ յարուցեալ ի Ղարսայ անտի գնաց ի Թիլֆիզ:

Եւ անդէն հրամայեաց զերեք հարիւր տունս յերկրէն Երեւանայ արտահանել և տանիլ ի խորասան ի Մաշադ քաղաքն, սոյնպէս և ի Նախիջևանայ երկրէն զերկու հարիւր տունս, նաև հրամայեաց զվերոյսացեալ ի Ղարսայ նահանգաց քչեալ տունսն տանիլ ի խորասան: Որ և կատարեցաւ հրամանս նորա<sup>11</sup>: Եւ թէ որպէս տարան զնոսա՝ ի յայլ պատմութիւնս լիապէս զը-

ջեալ եմք: Եւ ի Թիլֆիզոյ անտի ելեալ՝ անցանէր ընդ Կուրն մեծ դետ, և լեկզի ազգսն որք կային ամրացեալք ի մայրախիտ ստորտան մեծի լերինն Կովկասայ, հնազանդեցուցանելով՝ հասանի ի Դարբանդ: Եւ անտի զառնայ ի նոր Շամախի: Եւ անտի գայ ի լայնատաքած դաշտն Մուղանայ:

Դիտելի է աստ զի այսպէս իբրև յաղթեաց ամենից այնց թշնամեաց, որք տիրեալ էին զգլխաց երկրացն, յորոց և արտաքսեալ էհան զնոսա և փախոյց յիրաքանչիւր աշխարհն իւրեանց և թափեաց զամենայն վիճակս թագաւորութեան իւրեանց ի թշնամեաց բռնութեամբք և պատերազմօք: Այսինքն, զՍպահան, զՇիրազ, զԲոհ, Դիլան, զԵզդ, զՔրման, զԼառ, զԲանդար Աբաս, և զայլ ծովեզրական նաւահագիստսն. նաև զՇուշդար, որ է Շոշ, զԴուրազ, զՀաւիզա, զբոլոր Լոսստան, զՀամադան, զՔրմանշահ, զՅոմին, զՄարաղայ, զԹարվէզ, զՍոյ, զՍալմաստ, զՆախիջևան, զԵրևան, զԹիլֆիզ, զԵրևանջա, զՇամախի (զոր զկնի առնելոյն հրամայեաց տեղափոխել զգովելի քաղաքն այն ի յԱղսու կոչեցեալ տեղ վաւուք(?), զոր և փոխեցին իսկ), զԴարբանդ, որ է Դամուր Ղափու, զԲարդա, զԱրդափիլ, զԴիլան, զՋանկիա, զՍուլթանիա, զԿաղբին, զՂոււմ, զԲաշան, զԹէհրան, և զՀերաթ, հանդերձ ամենայն վիճակօքն իւրեանց:

Արդ՝ զայսոսիկ իբրև էառ և յաջողեցաւ զործն իւր, զօրացաւ և բռնացաւ յոյժ, և զամենայն սիրտս Ղզլբաշական զօրացն ձգեաց առ ինքն հնարաւորութեամբք, և մահաւանդ ազատելով զերկիրսն նոցա ի թշնամեացն ձեռաց: Յայնժամ խորհի և տեսանէ զի եկն պատշաճաւոր օր և էհաս ձեռնառու ժամանակ, յորում կարէ զնախախորհեալն իւր զխորհուրդ և զներծրաբեալ ի սրտի

իւրում արտայայտել և կատարել: Վասն որոյ յառաջ քան զգալն իւր ի Մուղան անդ, հրամայէ զի ամենայն քաղաքաց և ի գաւառաց որք ընդ իշխանութեամբն իւրոյ են, խանք, սուլթանք, գործակալք և արք երեւելիք կարգացողք և այլք անուանիք, համազգիք և այլազգիք եղեալք ամենեքեան զնասցեն ի Մուղան և պատու պարեպեն անդ, մինչև ի գալն իւր անդ:

Որոց ի լսելն զհրաման նորա, փութանալիկ ելանեն յիւրաքանչիւր տեղեաց և գան. բայց մինչև եկեալք ամենեցունց, ինքն ի կողմանցն Շամախոյ գայ ի Մուղան յամսեանն յունուարի, որ լինի օր յերկոտասաներորդ: Որ և հրամայէ զռոճիկս տալ օր ըստ օրէ եկելոցն բնաւից, և յամենայն առաւօտու ի սեկամն իւր գնալ:

Ձայտոսիկ աւուրս գան և հասանեն անդ մնացեալքն ամենեքեան, և պատրաստին. լինի այս ի ռամազանի ամսոյն իւրեանց: Իբրև մերձեանայ օրն բայրամի, աւուրբ միով յառաջ հրամայէ զվաթսուն և զվեց գազեան և երկոտասան սեամբք վրանն հարկանել: Իսկ յառաջի աւուրն յորում կատարի տօն մեծ բայրամին որ լինի օր երրորդ ամսոյ փետրուարի իբրև զնան եկեալքն ամենեքեան ընդ առաւօտն ըստ սովորութեանց իւրեանց ի սէլամ, և մանաւանդ ի շնորհաւորել զբայրամն մեծի խանին, յայնժամ հրամայէ զպատուելի արսն ի յեկելոց անտի որոշեալ և տանիլ առ ինքն որ բազմեալ լինի ի վրանին մեծի:

Որք և գնացեալք երկիւղիւք մեծօք և պատկառանօք խոնարհամբ գլխոց ողջունեն զնա, շնորհաւորեն նաև զբայրամն նորա: Որ և հրամայէ նստիլ յաջ և յահեակ: Որք և նստին ըստ իւրաքանչիւրում կարգի զոր ուսուցեալ էին նոցա յառաջագոյն: Ի գլուխ աջա-

կողմանն բազմեալ լինի դեսպանն Օսմանցւոց վերոյիշեալ Գեանջ Ալի փաշէն, իսկ ի գլուխ ձախակողմանն նստեալ լինի իւր մեծ եղբայր Իբրահիմ խանն, յորոյ ներքոյ իւր որդիքն և եղբօր որդիքն կարգաւ: Եւ ապայ ուշաց դեսպանն:

Ընդ որս բազմեալ լինի և յոգնիմաստ և բազմաշխատ հայրապետն մեր Աբրահամ թրակացին ի յաջ կողմն, ի վայր քան զութ խան և ի վեր քան զբաւասուն խան: Զորս խանն հնարագէտ և հանճարաշատ պատուէ բանիւք, լիացուցանէ անուշահամ կերակրովք, զօվացուցանէ քաղցրագոյն ըմպելիօք, հոտոտէ վարդաջրովք և ծխանիւօք, հեշտացուցանէ և ուրախացուցանէ երաժշտական երգօք, գուսանական նուագաբանօք, և մանկական պարողութեամբք: Եւ այսու հնարիւք զսիրտս նոցա քարշէ առ ինքն և այժմ արձակէ ի խաղաղութիւն զնոսա: Որք և յարուցեալք զնան յիւրաքանչիւր իջևանս իւրեանց: Իսկ ի վաղիւն հրամայէ եկելոցն ամենից յերրորդ ժամու աւուրն ելանել արտաքս ի բանակէն ի տեղի մի, յորում իւրաքանչիւրոց քաղաքաց և գաւառաց պետք երկրաւանօք արամբք իւրեանց երախանս իւրոց և ի հաւատարմաց զարս եօթունս, որոց անուանքն լինին այսք, Միրզա Զաքի, Միրզա Մեհաբ<sup>12</sup>, վեքիլ Թահմազ, Միրզա Աբգըլլադիմ, Միրզա Ալիաբբար, ընդ որս լինին և Մայաբբաշին և մեծի խանին սանդուղդարն: Որք և գնացեալք առ նոսա դաս դաս կոչեն զնոսա և ասեն, հրաման է մեծի խանին, զի որիշ որիշ ամենեքեանքդ գնացեալք խորհեցէք ի միջի ձերում ընդ միմեանս թէ զո՞ ոք կամիք և խնդրէք ձեզ և երկրիդ ձերում տէր և թագաւոր լինել և զձեզ և զերկրիդ ձեր ի հանգստեան և ի խաղաղութեան պահել, զնա բերեալ կացուցէք

զձեզ տէր և թագաւոր: Քանզի, ինքն ծերացեալ է և մանաւանդ խոնձեալ է, յայսքան ժամանակա ի պատերազմունս լինելոյն:

Ահա տուէութեամբն Աստուծոյ զՊարսկաստան և զայլս աշխարհս ձեր ազատեաց ի թշնամեաց և ետ ի ձեռս ձեր: Յետ այսորիկ կամի ինքն գնալ ի Սորասան ի զղեակն իւր, և աղօթել անդ վասն ձեր և վասն իւր: Աւստի անա զհրաման նորին և զկամ իմացուցաք ձեզ, զի ամենեքեան գնացեալ խորհեցիք մինչև յիններորդ ժամն, և ի նոյն ժամուն կրկին եկեալ աստ՝ զխորհեալսն ձեր և զկամս ուրոյն ուրոյն ասասլիք մեզ զի մեծի Խանին զպատասխանի տարցուք:

Զկնի այսց բանիցս աւարտեցմանց ամենեքին գնան յիւրաքանչիւր տեղիս: Եւ իմանան յայնց արանց ասացելոց բանիցս զգիտաւորութիւնս և զկամս և զխորհուրդ մեծի և հարապիտի խանին, որ ինքն կամի լինիլ: Վասնորոյ թէպէտ կամաւ և թէ ակամայ ամենեքեան ի մի կամս և ի մի խորհուրդ միաբանին, որ է զնոյն ինքն կամին: Նմին իրի դառնան փութով ի նոյն ժամադրեալ տեղին, դան անդ և այնք եօթանեքին արքն որք հարցեալք զնոսա ուրոյն ուրոյն և գտանն զնոսա զամենեանս ի մի կամս և ի մի խորհուրդս և դարձեալ անդրէն գնան, առ Խանն մեծ, որում և զեկուցանեն զհամախառնութիւնս նոցա ամենեցունց որ զնոյն ինքն կամին տէր և իշխող գոլ իւրեանց:

Արդ ի վաղիւն հրաման լինի կրկին գնալ ամենայն եկեալք ի նոյն տեղին: Յոր գնան և այնք արքն եօթեանք, յորոց մին որ լինի վէքիլ—Թահմազն՝ ասէ ցնոսա, Լուարսէք, Խանք, Սուլթանք, հայոց Խալիֆա

և այլք ամենեքեանք.—Քանզի այսպէս ասէ խանն մեծ, թէ՛ որովհետեւ զիս ոչ թողիք և ոչ կամեցաք գնալ ի տեղին իմ և հանգչիլ անդ, վասնորոյ և ես հետեիմ անա կամաց ձերոց: Սակայն զերիս իրս զայնոսիկ խնդրեմ ի ձէնջ ամենեցունց, պարտիք և դուք կատարել: Նախ, զի եթէ յետ այսորիկ յայտնեցի երբէք ուրեք որդի Շահին, և կամ ոք յազգէ նորին, պարտիք ամենեւին ոչ միաբանել ըն նմա, և ոչ ընդունել գնա, և ոչ . . . . օգնական լինիլ նմա: Երկրորդ, զի զայս նշովս և զհայնոյանս ասէք զորս Օսմալին և Օսմանին, պարտիք այսուհետեւ ոչ ասել: Նաև զիս և Օսմանին, պարտիք յայսուհետեւ ոչ ասել: Նաև և ոչ արիւնեցուցանել սակա Հասան և Հուսէյինին, և զերութիւնք և արեանց հեղմունք ի մէջ երկուց ազգացս՝ վասն զի յազապս այնց հայնոյանացն մեծ խոռվութիւնք լինին, որք եմք զուրանին ընդունողք և մահմեդականք: Բայց զանազանութիւնքն որք գոն ի յաղօթս մեր և նոցա, պահեսցին այնք, զի մեք զմերոն ասասցուք և նոքա զիւրեանցսն, ի տարապարտուց զմիմեան մի նախատիցուք և մի անարգեսցուք: Զի և նոքա ի մէնջ ի Քաբայ գնացող գհաճխն ոչ նեղացուցեն և ոչ զաւելի ինչսն պահանջեսցեն, այլ յիւրեանց եղբայրսն համարելով պատուեսցեն:

Նաև որովհետեւ ի չորս կողմն աղօթեն ի Քաբայումն, ուրեմն կարելի է և ընդունելի, ապաքէն պարտիք և դուք ի յոր կողմն որ լինիցի աղօթել: Երրորդ զի որովհետեւ զիս կամեցաք թագաւոր կացուցանել ձեզ, պարտիք ապա յետ վախճանի իմոյ իմ օճախին և իմ զաւակաց զանհնազանդութիւնս և խայինութիւնս ոչ առնել, այլ հնազանդ մնալ միշտ: Զայսոսիկ զերիս խնդիրս պարտիք ի թղթոջ գրել և արձանա-

ցուցանել և նշովիւք հաստատել զոր և ամենեքեանքդ  
կնքել և տալ ինձ: Հրաման և խնդիր մեծի խանին ա-  
սեն այս է, զի՞նչ ասէք առ այս: Առնուք ի յանձն  
ձեր և թէ ոչ: Յայնժամ պատասխանեալ ամենեցունց  
ասեն ի միաբերան, այժ, անձինս մեր առնումք և  
կամիմք և հնազանդիմք: Նոյն ժամայն կարդան զՔա-  
թէն և արձակին ի խաղաղութիւն և գնան իւրաքան-  
չիւր տեղիսն, յիմարեցեալքն այնք և եղկելիք ոչ կա-  
րացին իմանալ իսկապէս զմիտան թէ՛ սա որ ոչ խնա-  
յեաց ի թագաւորն մեր, այլ այնպէս արար նմա, ապա  
զի՞նչ առնելոց իցէ մեզ արդեօք: Քանզի որ կապէ  
զհօր, ոչ այլ ինչ է վախճանական գիտաւորութիւն  
նորա, եթէ ոչ գտուն նորա աւար առնել: Սոյնպէս որ  
զայգետէր սպառնանէ և ի յայգիս ոչ խնայէ: Որպէս  
զգայլ ի հովիւ կացուցանեն ի վերայ ինքեանց ոչխա-  
րացելոց<sup>13</sup>:

«ԹՈՒՂԹ ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱԶՕՐ ԿԱՅՍՐՆ ՌՈՒՍԱՑ  
ՎԱՍՆ ՊԷՍՊԷՍ ՆԵՂՈՒԹԵԱՆՅ ԵՐԿՐԵԱՑՍ  
ՄԵՐՈՑ»\*

Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակովբ, որ և շնորհիւն  
նորա կաթողիկոս . . . . :

Առ յարմատոց բարեաց բարեպէս ընձիւղեցեալդ,  
առ ի տոհմից արեաց արիարար վերաբուսեցեալդ, առ  
յԱստուծոյ Հօրէ ընտրեցեալ, յՈրդւոյ Միածնէ արժա-  
նաւորեցեալ և ի Հոգւոյն արբոյ կոչեցեալ և որոց ամե-  
նազօր անուամբն պսակաւորեցեալդ և օծեցեալդ առ  
գերապայծառ և շքեղապանծ կայսրդ, առ Օգոստափառ  
և վսեմազունեղ արքայդ արքայից, բազմազօր և աշ-  
խարհակալ թագաւորդ թագաւորաց, առ Չքնադակարգ  
և բարեսահման իշխողապետդ, առ յոգնահանճար և յո-  
լովիմաստ, առ Մեծահաւատ և առաքինագործդ . . . :

Այս են միտք բանիցս մերոց զի յայտնի է մեծա-  
գին Աստուածասիրութեանդ Ձերում, որ ողորմելի և  
խղճալի ազգս մեր Հայոց, նոյնպէս և ազգն Վրաց յամաց  
բազմաց հետէ անտի, մինչև ցայժմ կան անկեալք ի  
ներքոյ ծառայութեան այլազգեաց յաղազս մեղաց մե-  
լոց բազմաց, որք բազմօք տառապակրութեամբք և պէս  
պէս նեղսակրութեամբք անցուցեալ ենք և անցուցա-  
նեմք զկեանս մեր: Եւ մանաւանդ յայսքան ամս, յորս

\* Այս թուղթն ուղղված է Յելիզավետա Պետրովնա կայս-  
րուհուն:

ցուցանել և նզովիւք հաստատել զոր և ամենեքեանքդ  
կնքել և տալ ինձ: Հրաման և խնդիր մեծի խանին ա-  
սեն այս է, զի՞նչ ասէք առ այս: Առնուք ի յանձս  
ձեր և թէ ոչ: Յայնժամ պատասխանեալ ամենեցունց  
ասեն ի միարեւրան, այժ, անձինս մեր տնտմք և  
կամիմք և հնազանդիմք: Նոյն ժամայն կարգան զՔա-  
թէն և արձակին ի խաղաղութիւն և գնան իւրաքան-  
չիւր տեղիսն, յիմարեցեալքն այնք և եղկելիք ոչ կա-  
րացին իմանալ իսկապէս զմիտսն թէ՛ սա որ ոչ խնա-  
յեաց ի թագաւորն մեր, այլ այնպէս արար նմա, ապա  
զինչ առնելոց իցէ մեզ արդեօք: Քանզի որ կապէ  
զհզօր, ոչ այլ ինչ է վախճանական դիտաւորութիւն  
նորա, եթէ ոչ զտուն նորա աւար առնել: Սոյնպէս որ  
զայգեաւէր սպանանէ և ի յայգիս ոչ խնայէ: Որպէս  
զգայլ ի հովիւ կացուցանեն ի վերայ ինքեանց ոչխա-  
րացելոց<sup>13</sup>:

«ԹՈՒՂԹ ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱԶՕՐ ԿԱՅՍՐՆ ՌՈՒՍԱՑ  
ՎԱՍՆ ՊԷՍՊԷՍ ՆԵՂՈՒԹԵԱՆՅ ԵՐԿՐԵԱՑՍ  
ՄԵՐՈՑ»\*

Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակովբ, որ և շնորհիւն  
նորա կաթողիկոս . . . . :

Առ յարմատոց բարեաց բարեպէս ընձիւղեցեալդ,  
առ ի տոհմից արեաց արիաբար վերաբուսեցեալդ, առ  
յԱստուծոյ Հօրէ ընտրեցեալ, յՈրդոյ Միածնէ արժա-  
նաւորեցեալ և ի Հոգւոյն սրբոյ կռչեցեալ և որոց ամե-  
նազօր անուամբն պսակաւորեցեալդ և օծեցեալդ առ  
գերապայծառ և շքեղապանծ կայսրդ, առ Օգոստափառ  
և վսեմագունեղ արքայդ արքայից, բազմազօր և աշ-  
խարհակալ թագաւորդ թագաւորաց, առ Չքնադակարգ  
և բարեսահման իշխողապետդ, առ յոգնահանճար և յո-  
լովիմաստ, առ Մեծահաւատ և առաքինագործդ . . . :

Այս են միտք բանիցս մերոց զի յայտնի է մեծա-  
գին Աստուածասիրութեանդ Ձերում, որ ողորմելի և  
խղճալի ազգս մեր Հայոց, նոյնպէս և ազգն Վրաց յամաց  
բազմաց հետէ անտի, մինչև ցայժմ կան անկեալք ի  
ներքոյ ծառայութեան այլազգեաց յաղազս մեղաց մե-  
րոց բազմաց, որք բազմօք տառապաւորութեամբք և պէս  
պէս նեղսակրութեամբք անցուցեալ ենք և անցուցա-  
նեմք զկեանս մեր: Եւ մանաւանդ յայսքան ամա, յորս

\* Այս թուղթն ուղղված է Յելիզավետա Պետրովնա կայս-  
րուհուն:

Թագաւորութիւն կարմրագլխից բարձեցեալ է, առաւել  
հղեն և բազմացան վիշաք և նեղութիւնք մեր յամե-  
նայն իրաց և իրականութեանց, այսինքն հաւատոց  
ուրացութիւնք, բարեգործութեանց խափանմունք, վա-  
նօրէից անցլց (?) և եկեղեցեաց աւերմունք: Աստուա-  
ծային պաշտամանց լուութիւնք, մանկանց եկեղեցւոյ և  
ի Քրիստոս հաւատացելոց գերեմլարութիւնք, քաղա-  
քաց ու գաւառաց և գիւղօրէից ամայութիւնք, ընչից  
և ստացուածոց կապտութիւնք: Այսպիսիք և այլք ա-  
ւելիք չար դիպուածք, որք պատահեցան և պատահին  
ևս մեզ Հայոց և Վրաց ոչ թէ միայն յայսց մեր երկ-  
րականացս այլազգեաց պատահեցան և պատահին մեզ,  
այլ մանաւանդ ի կովկասաբնակ լեկզեացն մարգագո-  
ղաց և շաղխակերաց և վայրենաբարոյից, որք յայս-  
քան յամս կատարեցեալք և համարձակեալք յարեան  
անմիջոց ժամանակօք դասք դասք ի վերայ կողմանցս  
մերոց ևս առաւել ի վերայ Վրաստանայ, յորմէ թէ  
որքան արդեօք զգերիս են տարեալ և որքան զմար-  
դիկս են սպանեալ և որքան զհոշակաւոր վանօրեայս և  
զԱնապատս են անմիաբան արարեալք և թրքան զեկե-  
ղեցիսն են քակեալք և զմիաբանս նոցա և զաղօթողսն  
ի գերութիւն վարեալք թէ վրաց և թէ հայոց, ոչ կա-  
րեմ ընդ գրով արկտնել: Վասն այսորիկ անպատմելի  
աղէտից ու անճառելի դառնութեանցս անճար և անօգ-  
նական մնացեալ օծեցեալ արքայդ այդ վրաց Թէմու-  
րազ ելեալ յերկրէ յիւրմէ զճարհակ վիշտս և զանա-  
զան աշխատակրութիւնս յանձն առեալ սակա Քրիստո-  
սեան հաւատոյս եկն առ բազմազօր բարեպաշտութիւնդ  
ձեր յուսալով յամենակարօղն Աստուած և ապաւինելով  
յողորմածութիւն գերափառութեանդ ձերոց վասն օգ-  
նականութեան ի ձէնջ խնդրելոյ և զհնարս փրկութե-

ան մնացեալ քրիստոնէից աստ եղելոց, որք աղաւթե-  
լով մեծով յուսով սպասեն ակնադէտ աստանոր այսր  
աղագաւ և մեք աղաչելով աղաչեմք և խնդրելով խնդ-  
րեմք, զի վասն ամենազօր անուանն Քրիստոսի Աստու-  
ծոյ մերոյ և վասն պատուական խաչին նորա և սակս  
սրբոյ հաւատոյ՝ որ առ նա, զհայցուածս դորա և զմերս  
կատարել հոգայցէք և զհնարս զտանիցէք եթէ կարելի  
լիցի և որպէս Աստուածատուր հանճարեղութիւնդ ձեր  
վկայէ և կամի, մի անտես և անյոյս առնիցէք զմեծա-  
հաւատ արքայդ այդ եկեալդ առ ոոս ձեր և զմեզ աս-  
տի աղաչօղս, այլ որպէս հոգայք զձեր օրհնեալ ու բար-  
գաւաճեալ ազգդ, խնդրեմք նոյնպէս զազգս մեր ողոր-  
մելի և զազգն վրաց հոգալ, վասն զի մեք ևս եմք հա-  
նապաղ աղօթող սակս հաստատութեան Թագաւորու-  
թեանդ ձերոյ և սակս բարեյաջողութեան և մշտայաղ-  
թութեան գործոց ձերոց ի փառս Քրիստոսի Աստուծոյ  
և ի պարծանս մեր: Դիտելի է ևս և զի եկեղեցական  
հոգևոր պաշտօնէից ինչք և ստացուածք են աղօթք և  
օրհնութիւնք, զորս միշտ ընծայեալ մատուցանեն Աս-  
տուծոյ նաև ողջունիւ հանդերձ սրբոցն շնորհօք և զօ-  
րութեամբք և աղօթական բանիւք ահա ընծայեալ մա-  
տուցաք . . . որպէս գերկնային և զԱստուածային իր  
ինչ աղնուական և դնելի ի գանձարանի հոգևորի ի բա-  
րեպաշտութեանէ Թագաւորութեանդ ձերոյ փաստ և անդ  
հոգևոր ճոխութեան լիցի ձեզ նապաստ:

Վասն որոյ զայս թուղթ օրհնութեան, սիրոյ և ա-  
մենափարթամ Թագաւորութեանդ ձերոյ, զոր սիրոյ  
ձերմէ ժտիմք լինիցի աստ մարմնաւոր յղիութիւն:  
Գրեցաւ ի ՌՄԹ (1760) Թվին ի յուլիս:

Լուսանցքում ավելացրած է\*.

«Թէպէտ մեծագլխի և հռչակատու հմ և բարեպաշտ օժեակ արքայն վրաց Թէմուրազ Հերակլիւ Գրիգորոսազօրիւ արքայիւ անհանգիստ մարմնով զցայգ և զցերեկ

\* Հակոբ կաթողիկոս Շամախեցու այս թուղթը հանված և Յերեվանի Պետական Կենտր. Ձեռագրատան № 2911 ժողովածուից, վոր ունի հետևյալ վերնագիրը. «Օրինակը կոնդակաց Յակոբայ Շամախեցու և Սիմէօնի Երևանցու կաթողիկոսացն» քառածալ նոտր և շղագիր «գրեալ ի թուականէն Հայոց ՌՄԺԱ մինչև ՌՄԺԳ ի սուրբ Էջմիածին»։ Այս վերնագիրը նշանակողները կոնդակները գրության թվականները սխալ են նշանակել (հայոց ՌՄԺԱ— ՌՄԺԳ), այնինչ ժողովածուի մեջ մտնում են նշանակած թվականից առաջ գրած թղթեր. որինակ՝ ուսաց կայսեր անունով այս թուղթը գրված է ՌՄԹ (1760) թվին։ Հակոբ Շամախեցին թեև իր ժամանակին ունեցել է մեծ գիտնականի և հմուտ ուսուցչի հռչակ, բայց իր սահմանափակ աշխարհայացքով իր դարու հաբազատ զավակն է, սխալատիկ դալրոցի տիպիկ ներկայացուցիչներին մեկը։

Ինչպես հայտնի յե, ուսական եքսպանսիան դեպի Անդրկովկաս սկսվել եր Պետրոս I-ի ժամանակներից։ Այդ եքսպանսիայի առաջին զոհերը յեղան վրաց Վախտանգ Թագավորը և Ղաբաբադի հայ մելիքները։ Վախտանգից հետո Թեմուրազ Թագավորն իր ամբողջ հույսը ունենրել վրա դնելով՝ անցավ Մոսկվա, այնտեղից ոգնություն ստանալու հուսով։ Ինչպես յերևում է Հակոբ կաթողիկոսի այս թղթից, հայերի և վրացիների մեջ ազատադրական հարցի նկատմամբ վորոշ կապ և համաձայնություն կայացած է յեղել և հայերն ել վրացիների պես հավատում եյին ունենրել ոգնությանը։ Սրանով պետք է բացատրել Հակոբ կաթողիկոսի միջնորդությունը, վորպեսզի Թեմուրազը Մոսկվայից դատարկ չվերադառնա։

Հակոբ կաթողիկոսի այս թուղթը մի քանի անգամ հիշվում է մեր պատմական գրականության մեջ. 1) Լ. և Ռ.—Պատմություն Յերեվանի թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 77. 2) Եջմիածնի Մայր աթոռի ու ուսաց կառավարության հարաբերութիւնների ծագումը, Թիֆլիս, 1905 թ. և այլն, բայց հրատարակվում է առաջին անգամ։

ընդիմացան և ընդիմանան ևս լեզկեաց և յաղթեցին ևս բազում անգամ, սակայն ոչ կարացին ոտս նոցա խափանել ի գալոյ յերկիրն իւրեանց և այժմ որդի դուրին միշտ է ի մրցմունս այնդ հաւատոյ հակառակ թըշնամեացն և հաւատացեալ քրիստոնեայք, թէ հայք և թէ վիրք և թէ այլազգիք ևս, զի զնոսա ևս գերեն, նախ Աստուծոյ, ապա դոցա պահպանութեան կան այժմ։ Բայց և զի ոչ կարացին խապառ խափանել զնոսա ի գալոյ և օգնողք ևս ոչ ոք եղեն դոցա»։

## Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Ավդաններն Իսպահանը գրավեցին 1722 թ. հոկտեմբերի 22-ին, տես *Патканов К. П.—Дневник осады Испагана.*

<sup>2</sup> Տաճիկները գրավում են Թավրիզը և Անդերկովկասի մեծ մասը, իսկ ռուսները՝ Կասպից ծովի ափերը:

<sup>3</sup> Նաղիրը ծնվել է 1687 թ., Խորասանում, Մաշադ քաղաքի մոտ յեղած Քալաթում: Նա վրանաբնակ աֆշարների ցեղից էր: Նաղիրը հայրը, Իմամ-Ղուլին, թաղիքից զգական էր պատրաստում և դրանով ապրում: 13 տարեկան հասակում Նաղիրը վորբանում է: Իր ընտանիքը կերակրելու համար նա դաշտերից ցախ է ժողովել յեղել և, բարձելով հորից լեռն ժառանգությունն ճնշացած ուղտի և եշի վրա, բերել քաղաք ու վաճառել:

Յերիտասարդությունից առաջին տարիներին անցնում է մի ավաղակային խմբի գլուխ և քաջություն անուն հանում: Հանուն է—Պատմագրություն վարուցն և գործոց Նաղըր Շահ թաղաւորին պարսից: Մադրաս, 1780, էջ 4:

<sup>4</sup> Նաղիրը 1732 թ. ոգոստոսին դահլենկեց անելով շահ Թահմաղին, ուղարկում է նրան Իսպահան ու փակում մի ամրոցում, նախկին շահին տալով հարեմի մի մասը և մի քանի ծառա: *Кнш-мишев—Походы Надыр-шаха, Тифлис, 1889 г., стр. 84.*

Այդ ժամանակ Հակոբ Շամախեցին յեղել է Իսպահանում, ինչպես այդ մասին գրում է իր «Շահողարան»-ի հիշատակարաններից մեկում:

<sup>5</sup> Մեր հեղինակի պատճառաբանությունը, վոր ռուսներն ուրախությունից Գիլանը հանձնում են պարսիկներին, ի հարկի, չի կարող հիշող լինել: Գիլանից հեռանալու պատճառը Ռուսաստանի ներքին քաղաքական վիճակն էր:

<sup>6</sup> Այն ժամանակ, յերբ Նաղիր-շահը պատերազմում էր տաճիկների դեմ, Ղաղղղումուխի խան Սուրխայը Ղըրմի թաթարների ռզնություն կանչելով տիրում է Շիրվանի խանության կենտրոնը հանգիստացող վաճառաքա՜ Շամախի քաղաքին, վորը կադ-

մում էր Պարսկաստանի անբաժան մասը: Նաղիրը, ձմեռը վրա հասնելու պատճառով, չկարողանալով մանել Դաղստան ու պատժել Սուրխայ խանին, իր բարկությունը թափում է Շամախու վրա, հիմնահատակ անելով քաղաքը և բնակիչներին գերի տանելով: *Кншмишев С. О., Походы Надыр-шаха, Тифлис, 1889 г., стр. 95.*

Այդ մասին Աբրահամ Կրետացին գրում է, վոր Մուղան յեկան Շամախու հայերի ներկայացուցիչները և խնդրեցին Կրետացուն՝ խանից (Նաղիրից) թույլտվություն ստանալ «վասն բնակութեան, զի Շամախին աւերեալ էր և քակեալ Վալինամաթն (Նաղիրը) յորժամ էառ յառաջ քան զգալն ի Կենճէ (Գյանջա) և ութ ժամու ճանապարհ հեռու ի Շամախացն հողէ բերդ մի շինեալ հրամայեաց զմնացեալ ջամախեցիքն անդ բնակեցուցանել, և զի էր ունն ապականեալ և տեղն շողային և ջուրն պակաս և տաճկունք, որ են լակղիք և Սուննիք վշտացուցանէին և տառապեցուցանէին զազդ մեր: Վասն որոյ, խնդրեցին բազում անգամ կրկին բնակիլ ի աւերեալ Շամախու քաղաքն, որ և բարկացեալ իսպառ քանդեաց, վասն որոյ անճարացեալ եկին առ իսաղեհե և ես սրտապնդեալ արդ արարի մեծի Վալինամաթին և խնդրեցի ի նմանէ տալ հրաման Շամախեցի հայոց արտաքոյ նոր շինած բերդին ժամու մի ճանապարհ հեռի ի բերդէն ի տեղի մի վայելուչ, զոր նոքա խնդրեցին»: Նաղիր-Շահը կատարում է Կրետացու խնդիրը:

Աբրահամ Կրետացի.— Պատմագրություն անցից իւրոց և Նաղըր շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 65—66:

<sup>7</sup> Հակոբ Շամախեցու ակնարկած գրվածքը մեզ անհայտ է:

<sup>8</sup> Թահմադ-Ղուլի խանի տեսակցությունն Աբրահամ Կրետացի կաթողիկոսի հետ և նրա Նվմիածին այցելելու նկարագրությունը մանրամասն կերպով տվել է մեզ նաև Աբրահամ Կրետացին իր գրած «Պատմագրություն» աշխատություն 10-րդ և 11-րդ գլուխներում: Յերկու հեղինակներն էլ զեպքերը նկարագրում են իրար նման:

<sup>9</sup> Ինչպես հիշվեց 7-րդ ծանոթագրության մեջ, Շամախեցու այդ գրվածքը մեզ անճանութ է:

<sup>10</sup> Աբրահամ Կրետացի — Պատմագրություն... էջ 16—21:

<sup>11</sup> Այս մասին տես Արքայազն Կրետացի — Պատմագրութիւն... գլ. 19:


<sup>12</sup> Մերգա Մեհտին Նաղիր-շահի պալատական պատմիչն և Մերգա Մեհտի խանն սկզբում Թահմազ-Դուլի խանի քարտուղարն եր' «Մուշի ուլ մոսմալիք» տիտղոսով: Արքայազն Կրետացու ասելով՝ Նաղիր-շահը բարկանալով, նրան զրկում է այդ կոչումից և միայն իր թագադրութեան առթիվ ներում և նշանակում է նրան պալատական պատմիչ: Մերգա Մեհտին թողել է յերեք պատմական գրվածք հետևյալ վերնագրերով. 1) Թարիդի Նաղիրի (պատմութուն Նաղիրի), 2) Թարիդի Ջահան—գոշահ (Տեղեկական պատմութունը) և 3) Դուռեյի Նաղիրին (Հազվագյուտ մարգարիտները): Տես Շեմսեդդին Սամի բեյ—հանրագիտարան տաճկերեն, Կոնստ., 1889: Արքայազն Կրետացի — Պատմագրութիւն..., 1870 թ., գլխ. 5, էջ 70:

<sup>13</sup> Նաղիր-շահի ընտրութեան պատմութիւնը Հակոբ Շամախեցին, հաժանորեն, գրել է Կրետացու կամ ուրիշ ականատեսները տված տեղեկութունների հիման վրա, վորովհետև ինքը Մուղան չի գնացել. այդ ընտրութեանը ներկա յեն յիղել Արքայազն Կրետացի կաթողիկոսն ու հայ մեղիքները՝ իբրև հայ ժողովրդի ներկայացուցիչներ: Այս ընտրութեան մանրամասն նկարագրութիւնը մենք գտնում ենք Արքայազն Կրետացու Պատմագրութեան 21—46-րդ գլուխներում:

Պատ. խմբագիր՝ Հ. Հալուսթյունյան  
Տեխ. խմբ. Վ. Մանուկյան  
Սրբագրիչ՝ Մ. Ջատիկյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ռ. Տոնյան



Հանձնված է արտադրութեան 4/11 1940 թ.  
Ստորագրված է տպագրութեան 28/11 1940 թ.  
Դրավիտի լիազոր Ա. 2166, հրատ. № 56, պատվեր № 31, տիրած 1000.  
ԱրմՖԱՆ-ի տպարան, Յերեվան, Լենինի փողոց № 67.



Հայաստանի Ազգային գրադարան



NL0422484

16097

122

APR 1 1950